ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՎԻ ՔԵՅ ԳՐՈՒՊ»
ՍԱՀԱՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ, 2025

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող 288 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի կառուցում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)
Ձեռնարկող	«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Հայաստան, Կոտայք, Հրազդան, Մաքրավան Հյուսիս-Արեվմտյան Թ., 36/2, 2301
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս՝	
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Վայոց Ձորի մարզ, Գետափ բնակավայր, փողոց 10, թիվ 1
Կառուցապատվող տարածքի մակերեսը	2,32 հա/23200մ^2
Կառուցապատման մակերեսը	2692,3 մ^2
Դպրոցի նախագծային հզորությունը	288 աշակերտ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԳՈՒՇ	Բնապահպանական Գնահատման և Ուսումնասիրության Շրջանակ
ԲՀՊՏՀ	Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր
ԿԳՄՍ	Կրթության գիտության մշակույթի և սպորտի
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԱԲ	Սեյսմիկ անվտանգության բարելավում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 2

Ամփոփ Բովանդակություն 5

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 7

1.1. Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ 7

1.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նպատակը և խնդիրները 7

1.3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմը 8

1.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվության մեթոդաբանությունը 8

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 9

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 13

4. ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ և ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ 14

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 14

5.1. Գործունեության իրականացման ենթակա տարածք 14

5.2. Շրջակա միջավայրի նկարագիրը 16

5.2.1. Աշխարհագրական դիրքը և Ռելիեֆը 17

5.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն 17

5.2.3. Կլիմա 19

5.2.4. Օդային ավազան 21

5.2.5. Հողային ռեսուրսներ 23

5.2.6. Ջրային ավազան 24

5.2.6. Կենսաբազմազանություն 26

5.2.7. Բուսական աշխարհ 26

5.2.8. Կենդանական աշխարհ 34

5.2.9. Վտանգված էկոհամակարգեր և պահպանվող տարածքներ 38

5.2.10. Պատմամշակութային հուշարձաններ 39

6. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԸ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 40

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 41

7.1. Շինարարական հրապարակի նախապատրաստում և կահավորում 50
7.2. Առկա շենքի ապամոնտաժման աշխատանքներ 53
7.3. Շինարարության փուլ 53
7.3.1. Հողային աշխատանքներ 53
7.3.2. Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ 54
7.3.3. Էլեկտրամատակարարում 55
7.3.4. Ջրամատակարարում և ջրահեռացում 55
7.3.5. Հրդեհաշիջման համակարգ 56
7.3.6. Աղբի հեռացում 56
7.3.7. Բարեկարգում 56
7.3.8. Կանաչապատում 56
7.4. Շինարարության իրականացման ժամանակացույցը 57
7.5. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր 57
7. 5. 1. Ջրօգտագործում 57
7.5.2. Շինարարության ընթացքում օգտագործվող նյութեր 59
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ 60
8.1. Օդային ավազան 60
8.2. Հողային ռեսուրսներ 62
8.3. Ջրային ռեսուրսներ 63
8.4. Կեղտաջրերի հեռացում 63
8.5. Կենսաբազմազանություն 64
8.6. Թափոններ 65
8.7. Աղմուկ և թրթռում 66
8.8. Արտակարգ իրավիճակներ 68
8.9. Պատմամշակութային և բնության հուշարձաններ 68
8. 10. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն 69
8.11. Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն 69
8.11.1. Արևային վահանակներ 70
8.12. Լանդշաֆտ 72
8.13. Բարեկարգում և Կանաչապատում 72

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 73
10. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ 74
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 139

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1.Միջին ջերմաստիճան 20
Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն 20
Աղյուսակ 3. Տեղումների քանակը 20
Աղյուսակ 4. Ձյան ծածկույթ 20
Աղյուսակ 5. Քամի 21
Աղյուսակ 6. Քամու հաշվարկային արագությունը 21
Աղյուսակ 7. Մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային 22
Աղյուսակ 8. Գետափ բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձաններ 40
Աղյուսակ 9. Եղեգնաձոր համայնքի ենթակառուցվածքները 41
Աղյուսակ 10. Կառուցապատման հիմնական ցուցանիշները 44
Աղյուսակ 11 . Առաջին հարկ (0.000 նիշ) 46
Աղյուսակ 12. Շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներ 54
Աղյուսակ 13. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները 61
Աղյուսակ 14. Կաթսայատնից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը 62
Աղյուսակ 15. Դիզ վառելիքից առաջացած արտանետումներ 62

Ամփոփ Բովանդակություն

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրում նախագծվող միջնակարգ դպրոցի կառուցումն իրականացվելու է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) պատվերով:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվում է բնապահպանական ազդեցության գնահատում՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համաձայն: Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) /խմբագրված 2023թ/ Հոդված 12, կետ 8-ի քաղաքաշինության բնագավառում «... քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով» քաղաքաշինության ոլորտի նախագծերը ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի դասվում են «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքնուության իրականացում:

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրում նախատեսվող 288 տեղ դպրոցի կառուցապատման մակերեսը կազմում է 2692,3 քմ և համաձայն սույն օրենքի պահանջում է ՇՄԱԳ հաշվետվության մշակում և ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննության և համապատասխան պետական փորձաքննական եզրակացության ստացում:

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ

ՍԱԲ ծրագրի շրջանակում մշակվել է Բնապահպանական Գնահատման և Ուսումնասիրության Շրջանակ (ԲԳՈՒՇ) փաստաթուղթը[1]: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՍԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և Բնապահպանական կառավարմ պլանի (ԲԿՊ) մշակման և մշտադիտարկման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

1.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նպատակը և խնդիրները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները: ՇՄԱԳ փորձաքննության նպատակն է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելման, նվազեցման կամ բացառման սկզբունքով՝ նախագծային փաստաթղթի ու ՇՄԱԳ հաշվետվության ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքում նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ պետական փորձաքննական դրական կամ բացասական եզրակացության

[1] chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.adb.org/sites/default/files/linked-documents/49078-004-earfab.pdf

տրամադրումը[2]:

ՇՄԱԳ գնահատման և փորձաքննության խնդիրներն են՝

1) էկոլոգիական անվտանգության պահանջների և շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանափակումների հիման վրա կայուն զարգացման ապահովումը,

2) հիմնադրույթային փաստաթղթի նախագծի դրույթների և նախատեսվող գործունեության դրական ազդեցությունների պահպանման, վնասակար ազդեցությունների ու դրանց հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ բացառման ապահովումը.

3) արտակարգ իրավիճակների դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության հնարավոր ռիսկերի գնահատումը:

1.3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմը

«Բ» կատեգորիայի նախաձեռնության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող կառուցվածքային պահանջները սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-ին մասի 1- ից 9 կետերում:

1.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվության մեթոդաբանությունը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Գնահատման հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող դպրոցի աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները,

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=178443/ Հոդված 6

քարտեզները,

- ծրագրի իրականացման համար մշակված ԲԳՈՒՇ փաստաթուղթը,
- ՀՀ օրենսդրության շրջակա միջավայրի օրենսդրական և կարգավորիչ շրջանակը
- ազդակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ Սահմանադրություն (2015). Հոդվածներ 10-ը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանման վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8-ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110-Ն ընդունված 2014 թ., փոփոխված 2023թ. ՀՕ-150-Ն)- կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց

համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների,

մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)- կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998թ.)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (1999թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության որոշումներ

- ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014թ. «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:

- ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի N286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-ն որոշում:
- ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ պետական սեփականություն համարվող եվ օտարման ոչ ենթակա պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N385-ն որոշում:

- ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող)օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-ն որոշում:

- ՀՀ Կառավարության 16 մարտի 2003թ. «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործնեության լիցենզավորման կագը հաստատելու մասին» N 121-Ն որոշում:

Այլ իրավական ակտեր

- ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

- ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Ուղեցույցներ և ստանդարտներ

– ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

– Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Այն գործունեությունը, որը Օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի՝ գնահատվում է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և 3-րդ կետին համապատասխան գնահատման արդյունքով նախաձեռնողը կազմում է հաշվետվություն՝

սույն օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան, և ներկայացնում փորձաքննության։

Ուստի ներկայացվում է հաշվետվություն՝ փորձաքննական եզրակացություն ստանալու համար։

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված։ Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր։

4. ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՇՄԱԳ փորձաքննության ներկայացված գուրծունեության նախաձեռնողն է «Վի քեյ Գրուպ» ՍՊԸ-ն, որի գրասենյակի հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Մաքրավան Հյուսիս-Արեվմտյան Թ., 36/2: ՀՀ Վայոց Ձորի մարզի Գետափ բնակավայրում նախատեսվում է կառուցել 288 աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոց, որի վերգետնյա կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500 քմ՝ կազմելով 2692,3քմ։

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. Գործունեության իրականացման ենթակա տարածք

Դպրոցի կառուցման ենթակա տարածքը գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում, իրավունքի տեսակը՝

սեփականություն, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման։ Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին։

Համաձայն սեփականության վկայականի տարածքում առկա են 2464,2 քմ մակերեսով դպրոցի շենքը, 67քմ մակերեսով կաթսայատունը և 18 քմ մակերեսով էլեկտրական և 60 քմ մակերեսով պահեստ։

Նախատեսվող գործունեության տարածքը նախկին դպրոցի տարածքն է։ Հողամասի մակերեսը կազմում է 2,3 հա։ Տարածքում առկա են ծառեր։ Գործունեության իրականացման ընթացքում ծառահատում կամ տեղափոխում չի նախատեսվում։

Կից գտնվում են՝ ներհամայնքային նշանակության ճանապարհ, կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ։ Բնակելի տները և հողամասերը գտնվում են 50 և ավելի մետր հեռավորության վրա։ Դիտարկվող տարածքը գտնվում է M10 ճանապարհից 98 մ, իսկ համայնքային ճանապարհից 110 մ հեռավորության վրա։ Դիտարկվող տարածքի հեռավորությունը Եղեգիս գետից ուղիղ գծով կազմում է մոտավորապես 170մ։

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները։ Տարածքում առկա է Զորավար Անդրանիկի արձանը (կիսանդրի), որը հաշվառված չէ որպես պատամամշակությաին հուշարձան։

Հողատարածքը տեղակայված է M10 միջպետական ճանապարհի անմիջական հարևանությամբ, ինչը հեշտացնում է հասանելիությունը։ Համայնքային ճանապարհները միանում են M10-ին՝ ապահովելով գյուղի ներսում և հարակից բնակավայրերի հետ կապը։ Դպրոցի շրջակայքում կան մասնավոր հողատարածքներ, որոնք հիմնականում օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով։

ՆԿ 1. Իրավիճակային քարտեզ՝ Տարածաշրջանում հողատարածքի տեղակայման ցուցադրմամբ

ՆԿ 2. Իրավիճակային քարտեզ (Google map-արբանյակային/ snapshot)

5.2. Շրջակա միջավայրի նկարագիրը

5.2.1. Աշխարհագրական դիրքը և Ռելիեֆը

Գետափ բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, մարզկենտրոնից 1-2 կմ արևմուտք, Եղեգիս գետի ստորին հոսանքի ափերին, ծովի մակերևույթից 1310 մ բարձրության վրա: Տարածքի ռելիեֆը բնութագրվում է միջին լեռնային լանդշաֆտով, որի մեջ ընդգրկված են խոր ձորեր, գետահովիտներ, խիստ մասնատված լեռնային լանջեր և գրավիտացիոն ռելիեֆային ձևեր: Ռելիեֆի այս բազմազանությունը պայմանավորում է գյուղի գյուղատնտեսական ուղղվածությունը՝ ավելի հարթ տարածքներում զբաղվում են այգեգործությամբ և հողագործությամբ, մինչդեռ բարձրադիր լանջերը հիմնականում օգտագործվում են անասնապահության համար:

5.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Վայոց ձորի մարզի տարածքի բարձրությունը ծովի մակարդակից տատանվում է 850մ(Արենի) մինչև 3522մ (Վարդենիս լեռ):

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից 25 կմ հարավ-արևմուտք, Արփայի գետահովտի մոտ: Հեռավորությունը Եղեգնաձոր քաղաքից 15 կմ է, մայրաքաղաքից՝ 140 կմ: Գետափ բնակավայրը տեղակայված է Վայոց ձորի լեռների ստորոտում, ծովի մակերևույթից 1310 մ բարձրության վրա: Ռելիեֆը բնութագրվում է խոր ձորերով և հնագույն հրաբխային գոյացություններով, որտեղ տարածված են կարբոնատային և նուրբ կտրտված ապարներ:

Երկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքի կտրվածքներում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին միոցեն-պլիոցեն դարակարգի հրաբխածին ապարներ, որոնք ծածկված են ալյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ նստվածքներով: Տարածքում հանդիպում են նաև կրաքարային և մերգելային շերտեր, որոնք տեղ-տեղ ենթարկվել են էկզոգեն փոփոխությունների:

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է «Հայր և որդի Տիտիզյաններ»

ՍՊԸ-ի կողմից՝ նախաձեռնողի պատվերով, հորատման եղանակով ֆոնդային նյութերի համադրմամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1 Ավազակավեր շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 20-25% պարունակությամբ: Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33գ) III կարգ է:

Շերտ 2 Ալյուվիալ ծագման ճալաքարա-կոպճային նստվածքներ 10-15% գլաքարերի պարունակությամբ, ավազակավի կավավազի լցանյութով: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (6գ) IV կարգ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող շրջանում տարածված գրունտային ջրերը կապվում են ճեղքային և ծակոտկենային տիպի ծագման և ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների գրունտային ջրերի հետ: Գրունտային ջրերի հոսքեր, հիմնականում հանդիպում են ժամանակավոր հոսքերի տեսքով, ձորակների և գետի հովտում (ցածրադիր տարածքներում): Համայնքի հիմնական ջրային զարկերակը Արփա գետն է: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության Տեղամասում ըստ փորված խորությունների ստորերկրյա ջրեր բացահայտվել են մինչև 2,0 մ խորությամբ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:



ՆԿ 3. Սեյսմիկ գոտիներ (ՀՀՇՆ 20.04-«երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմեր)

5.2.3. Կլիմա

Գործունեության տարածքը գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրում: Կլիման չոր է, ցամաքային, օրական ջերմաստիճանի մեծ տատանումներով: Տարածքին բնորոշ է չափավոր շոգ ամառ, տաք երկարատև աշուն և մեղմ, փոքր ձյան շերտով ձմեռ: Ամենատաք ամիսը հուլիսն է, միջին տարեկան ջերմությունը՝ 10.8°C է: Ամենացուրտ ամիսը հունվարն է՝ -3,3°C, բացարձակ նվազագույնը ջերմությունը -3,0 °C, իսկ բացարձակ առավելագույն՝ 39 °C: Առաջին սառնամանիքները սկսվում են նոյեմբերի II տասնօրյակում և ավարտվում մարտի սկզբում: Տարեկան տեղումների քանակը միջինում կազմում է 417 մմ, որոնցից 174 մմ գրանցվում է նոյեմբեր-մարտ ամիսներին, իսկ 243 մմ՝ ապրիլ-հոկտեմբերին: Ձյան ծածկույթը հասնում է առավելագույնը 70 սմ, ծածկույթով օրերի միջին քանակը՝ 58: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1.3 մ/վ, իսկ ուժեղ քամիների օրերի թիվը՝ տարեկան 15: Ստորև բերված են կլիմայական ցուցանիշները ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի Հանրապետության Շինարարական նորմերին համապատասխան: Ներկայացված են տվյալները կլիմայական ցուցանիշները մոտակա Եղեգնաձորի օդերևութաբանական կայանի տվյալներով:

Աղյուսակ 1.Միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանում	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, oC												Միջին տարեկան oC	Բացարձակ նվազագույն oC	Բացարձակ առավելագույն oC
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Եղեգնաձոր	-3,3	-1,6	4,0	10,2	15,0	19,8	23,9	23,8	19,5	12,5	5,8	-0,2	10,8	-3,0	39

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

	Օդի հարաբերական խոնավություն, %																
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավություն, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավություն, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական –ամը15 -ին	Միջին ամսական	Միջին ամսական –ամը15 -ին
Եղեգնաձոր	72	69	61	58	57	50	45	44	45	58	65	72	58	75	60	44	28

Աղյուսակ 3. Տեղումների քանակը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակ $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$ մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին,մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղեգնաձոր	33	34	41	58	59	41	21	15	14	35	32	34	417	174	243
	27	36	35	40	34	65	33	33	42	41	39	37	65		

Աղյուսակ 4. Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը

	Առավելագույն տասնօրյակային ծածկույթը, սմ	Տարվա մեջ ծածկույթով օրերի քանակ	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Եղեգնաձոր	70	58	148	79

Աղյուսակ 5. Քամի

Բնակավայրի անվանում	Ամիսներ	Կրկնելիությունը,% / Միջին արագությունը,մ/վ ըստ ուղղությունների								Անդրդի կրկնելիությունը, %	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը, հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հյուսիս-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Եղեգնաձոր	Հունվար	18	4	13	11	6	21	10	17	82	0,5	ՀվԱրլ	2,4	ՀվԱրմ	1,7
		1,4	1,3	1,5	1,8	1,6	1,7	1,7	1,4						
	Ապրիլ	15	12	13	15	8	14	13	10	55	1,6				
		2,1	1,7	2,1	2,2	2,1	2,5	2,8	2,5						
	Հուլիս	19	10	18	20	6	9	9	9	48	1,8				
		2,8	1,9	2,6	2,4	2,2	2,2	2,5	3,1						
	Հոկտեմբեր	9	3	11	6	7	31	28	5	69	1,1				
		1,7	1,5	1,6	1,9	1,8	2,2	2,4	2,2						

Աղյուսակ 6. Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում		
				25	50	100
Եղեգնաձոր	868,7	1,3	15	19	21	23

5.2.4. Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ

շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որը մշտական վերահսկողություն է կատարում 16 ստացիոնար դիտակայանների միջոցով, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2024 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ[3]:

Քանի որ Եղեգնաձոր համայնքում կամ հարակից բնակավայրերի տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան, ապա որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Ըստ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունների մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

Բնակչության խտությունը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO_2)	Ազոտի երկօքսիդ (NO_2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Աղյուսակ 7. Մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներ

Գետափ բնակավայրը, ունենալով շուրջ 1350 բնակիչ, դասվում է մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի շարքին: Այդ կարգի բնակավայրերի համար ընդունված օդի

[3] Տեղեկագիր ՀՀ Օդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին, 2024 թ 4-րդ եռամսյակ

ֆոնային աղտոտվածության ցուցանիշները, որոնք օգտագործվում են շրջակա միջավայրի վիճակի նախնական գնահատման և նախագծային աշխատանքների ժամանակ, հետևյալն են՝ ծծմբի երկօքսիդը (SO_2)՝ 0.006 մգ/մ³, ածխածնի օքսիդը (CO)՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդը (NO_2)՝ 0.023 մգ/մ³, ընդհանուր փոշին՝ 0.071 մգ/մ³:5.2.5. Հողային ռեսուրսներ

Վայոց ձորի մարզն առանձնանում է բազմազան հողաբուսական ծածկույթով: Տարածքում հիմնականում հանդիպում են լեռնատափաստանային, լեռնաշագանակագույն և գորշ հողեր, իսկ բարձրադիր գոտիներում՝ ենթալպյան և ալպյան մարգագետնային հողեր: Սարավանդային հատվածներում տարածված են շագանակագույն հողերը, իսկ չոր կլիմայական պայմաններում ձևավորվել են չոր տափաստանային լանդշաֆտներ: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա զարգացել են լեռնային տափաստաններ և բուսականության խայտաբղետ տեսակներ:

Մարդու գործունեության հետևանքով հողային ծածկույթը կարող է աղտոտվել ծանր մետաղներով, ինչպիսիք են պղինձը, ցինկը, արսենը, կապարը, մոլիբդենը, մանգանը, նիկելը, կադմիումը, քրոմը և այլ նյութեր, ինչպես նաև ցիանական միացություններով: Այս աղտոտման մակարդակը կարգավորվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010

թվականի հունվարի 25-ի «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 01-Ն հրամանով:

2024 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Վայոց ձորի մարզի Զանգակատան (Սովետաշենի), Վերնաշենի և Գլաձորի տեղամասերում: Ընդերքօգտագործման թափոնների Գլաձորի տեղամասը գտնվում է Եղեգնաձոր քաղաքից 12կմ հյուսիս-արևելք, Մալիշկա գյուղից 10կմ հյուսիս, Մալիշկա և Կորեկի-ձոր գետերի վերին հոսանքներում: Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը Գլաձորի բազմամետաղային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, հումքի արդյունահանման արդյունք է: Վայոց ձորի մարզում Գլաձորի տեղամասում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան

ՍԹԿ-ն՝ 1.7-23.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 1.3-11.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 14.0-703.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 6.9-477. 0 անգամ, արսենի պարունակությունը՝ 2.5-201.0 անգամ, ծարիրի պարունակությունը՝ 5.3-83. 0 անգամ, կապարի պարունակությունը՝ 3.1-419. 3 անգամ, մանգանի պարունակությունը՝ 1.1-3. 5 անգամ: Վանադիումի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն։ :[4] Համաձայն armmonitoring.am կայքի տվյալների՝ նաև 2022 թվականի երկրորդ եռամսյակում հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության դիտարկումներ են իրականացվել Վայոց ձորի մարզում: Մասնավորապես, Մալիշկա գյուղում ուսումնասիրված հողերում հայտնաբերվել են ծանր մետաղների որոշակի կոնցենտրացիաներ, սակայն կոնկրետ տվյալներ չեն տրամադրվում։ Եղեգնաձոր քաղաքի կամ Գետափ բնակավայրի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության վերաբերյալ կոնկրետ տվյալներ հասանելի չեն։

5.2.6. Ջրային ավազան

Վայոց ձորի ջրային համակարգը բավականին զարգացած է: Մարզի ամբողջ տարածքով հոսում է Արփա գետը՝ իր բազմաթիվ վտակներով, այդ թվում՝ Դարբ, Կապույտ, Գնիշիկ, Գրավ, Եղեգիս, Հերհեր, Մալիշկա, Ելփին և այլ գետակներ: Արփա գետը սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակի հյուսիսարևմտյան հատվածից՝ 3200 մետր բարձրությունից, և հոսելով անցնում է Նախիջևանի ու Թուրքիայի սահմանագծով, վերջապես միանալով Արաքս գետին։

Վայոց ձորի գետերը հիմնականում արագահոս են, ունեն մեծ թեքություն և անկում, ինչի շնորհիվ հարուստ են էներգետիկ ռեսուրսներով։ Արփայի վտակները որոշ հատվածներում ձևավորում են սահանքներ ու ջրվեժներ, որոնցից ամենահայտնին Ջերմուկի ջրվեժն է (հայտնի նաև որպես Ջրահարսի ջրվեժ), որը համարվում է բնական հուշարձան։

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակը գնահատվում է հինգ

[4] Տեղեկագիր ՀՀ Օդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին, 2024 թ 3-րդ եռամսյակ

աստիճանով՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման: Ջրի որակի կարգերը դասակարգվում են հետևյալ կերպ՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ – ի կողմից:

Համաձայն 2024 թվականի 4-րդ եռամսյակի մակերևութային ջրերի որակի ամփոփագրի Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից վերև՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև՝ հոկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Համաձայն 2022 թվականի մակերևութային ջրերի որակի ամփոփագրի՝ Եղեգիս գետի ջրի որակը Գետափ բնակավայրի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), ինչը պայմանավորված է երկաթի, մոլիբդենի և բարիումի պարունակությամբ: Համաձայն 2024 թվականի 4-րդ եռամսյակի մակերևութային ջրերի որակի ամփոփագրի Եղեգիս գետի ջրի որակը Շատին

ՆԿ 4. ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը/ 2022 թ

գյուղից ներքև նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կառուցապատվող դպրոցի հարակից տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Գետափ գյուղի միջով հոսում է Եղեգիս գետը, որը գյուղը բաժանում է երկու մասի՝ աջ և ձախ ափեր: Դիտարկվող տարածքը գտնվում է Եղեգիս գետի ձախ ափին՝ ուղիղ գծով մոտ 170 մ հեռավորությամբ: Դպրոցի տարածքի և Եղեգիս գետի միջև անցնում է M10 ճանապարը:

5.2.6. Կենսաբազմազանություն

Վայոց ձորի մարզի հողաբուսային ծածկույթն ու կենդանական աշխարհը բազմազան են և հիմնականում պայմանավորված են վերընթաց լանդշաֆտային գոտիականությամբ: Այսպիսով, մարզի տարածաշրջանները աչքի են ընկնում կենսաբազմազանության տարբեր տեղաբաշխվածություններով: Եղեգնաձորի ֆիզիկաաշխարհագրական շրջանում լանդշաֆտները դասավորված են երեք հիմնական բարձրության գոտիներում: Ցածրադիր գոտում հանդիպում են կիսաանապատային և չոր տափաստանային լանդշաֆտները, որոնք տարածվում են մոտ 1100-1300 մ բարձրություններում՝ ընդգրկելով Արփա և Եղեգիս գետերի հովիտների մերձափնյա տարածքները: Միջին բարձրությունների գոտում (1300-2000 մ) գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաանտառային լանդշաֆտները, որոնք բնորոշ են Եղեգնաձորի, Գետափի, Շատինի և հարակից շրջանների լեռնալանջերին: Բարձրադիր գոտում (2000 մ-ից բարձր) ձևավորվել են ենթալպյան և ալպյան մարգագետնային լանդշաֆտները, որոնք տարածված են Վարդենիսի լեռնաշղթայի լանջերին և Եղեգնաձորին հարակից լեռնային գոտիներում: Այս տարածքները կարևոր կենսամիջավայր են բազմաթիվ հազվագյուտ բուսատեսակների ու կենդանատեսակների համար:

Գետափի բնակավայրի տարածքի լանդշաֆտը հիմնականում ներկայացված է լեռնատափաստանային գոտիներով, որոնք բնորոշ են միջին բարձրությունների համար: Բուսական աշխարհը ներառում է տափաստանային և լեռնատափաստանային բուսատեսակներ: Կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային գոտիներին բնորոշ տեսակներով:

5.2.7. Բուսական աշխարհ

Ուսումնասիրվող տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է, ուստի ավելի նպատակահարմար է բուսականության մասին տեղեկատվությունը ներկայացնել տարածաշրջանի կտրվածքով:

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (նկար 2): Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Դարալագյազի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի, 2009թ) և գրավում է չոր տափաստանային ցածրալեռնային (1000-1600 մ ծ.մ.) լանշաֆտային գոտին (նկար 3), որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:

Դարալագյազի ֆլորիստիկ շրջանում էնդեմիկ բույսերի քանակը՝ 38 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակերի թիվը՝ 98 է, ըստ („Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա„ ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ):



ՆԿ 5. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի (2009թ.)

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է մոտավորապես 1100-1350մ բացարձակ բարձրությունների վրա: Այստեղ բուսականության հիմնական տիպերն են տափաստանայինն ու կիսաանապատայինը: Բուն ուսումնասիրվող տարածքում անտառածածկ տարածքներ չկան:

Տարածաշրջանին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներն են՝

Ցորեն արարտյան - Triticum araraticum Jakubz. - հանդիպում է Արենիի, Արփիի, Աղավնաձորի շրջակայքերում,

Տոմանթեա դարեղեգիսի - Tomanthea daralaghezica (Fomin) Takht. - հանդիպում է Դարալագյազի ֆլորիստիկ շրջանում

Զանգակ ազգակից - Campanula propinqua - հանդիպում է Դարալագյազի ֆլորիստիկ շրջանում

Տերեփուկ արփայի - Centaurea arpensis (Czer.) Wagenitz. – հանդիպում է Եղեգնաձոր շրջակայքում,

Գազ կորաեղջյուրավոր - Astragalus camptoceras Bunge - հանդիպում է Եղեգնաձորի շրջակայքում,

Հիրիկ ատրպատականյան - Iris atropatana Grossh. - հանդիպում է Եղեգնաձորի, Ազարակաձորի, Մալիշկայի շրջակայքերում,



ՆԿ 6. Նկար 3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները



ՆԿ 7. Նկար 4. Հայաստանի Հանրապետության բուսական ծածկույթը

Տարածաշրջանի բուսականությունը ներկայացված են Բարդածաղկավորների, Վարդազգիների, Լոբազգիների, Հացազգիների, Շրթնածաղկավորների, Խաչածաղկավորների և այլ ընտանիքներին պատկանող տեսակներով:

Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակներն են՝

1. Chaerophyllum aureum L. - Շուշանաբանջար ոսկեգոծ

2. Hypericum perforatum L. - Սրոհունդ խոցված
3. Portulaca oleracea L. - Դանդուռ սովորական
4. Artemisia fragrans Willd. - Օշինդր բուրավետ
5. Cnicus benedictus L. - Լայնատերևուկ օրհնված
6. Helichrysum plicatum DC. - Անթառամ ծալքավոր
7. Scorzonera latifolia (Fisch. et C.A. Mey.) DC. - Խինձ լայնատերև
8. Lepidium vesicarium L. - Կոտեմ բշտիկավոր
9. Capparis spinosa L. - Կապար փշոտ
10. Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ Սեգիերի
11. Salvia hydrangea DC. ex Benth. - Եղեսպակ դրախտավարդային
12. Aegilops cylindrica Host - Այծակն գլանաձև
13. Verbascum oreophilum K. Koch - Խոնդատ սարասեր /լեռնասեր/
14. Tribulus terrestris L. - Տատաշ փռվող
15. Zygophyllum fabago L. - Զուգատերև սովորական
16. Hyoscyamus niger L. - Բանգի սև
17. Urtica dioica L. - Եղինջ երկտուն
18. Alyssum desertorum Stapf. - Վառվռուկ անապատային
19. Capsella bursa- pastoris (L.) Medik. - Ծտապաշար, Հովվամաղախ
20. Thlaspi perfoliatum L. - Շնկոտեմ թափանցված
21. Dianthus cretaceus Adams - Մեխակ կավճային
22. Dianthus crinitus Smith - Մեխակ խավավոր
23. Silene italica (L.) Pers. - Ծվծվուկ իտալական
24. Atriplex tatarica L. - Թալ թաթարական
25. Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/
26. Chenopodium botrys L. - Թելուկ հոտավետ
27. Helianthemum ledifolium (L.) Mill. - Արևանթեմ սովորական
28. Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային
29. Sedum album L. - Թանթռնիկ սպիտակ
30. Sempervivum transcaucasicum Muirhead - Գառանդմակ անդրկովկասյան
31. Euphorbia heteradena Jaub. et Spach - Իշակաթնուկ տարագեղձային
32. Allium atroviolaceum Boiss. - Սոխ մուգ մանուշակագույն
33. Allium pseudoflavum Vved. - Սոխ կեղծ դեղին
34. Amaranthus retroflexux L. - Հավակատար սովորական
35. Astrodaucus orientalis (L.) Drude - Աստղազազար արևելյան
36. Eryngium billardieri Delaroche - Երնջնակ Բիլարդեի
37. Prangos ferulacea (L.) Lindl. - Պրանգոս նարդեսանման
38. Achillea millefolium L. - Հազարատերևուկ սովորական
39. Artemisia vulgaris L. - Օշինդր սովորական
40. Centaurea aggregata Fisch. et C. A. Mey. - Տերեփուկ կիտված
41. Chondrilla juncea L. - Ծամանիկ, Խիժաճարճատուկ կնյունանման
42. Cichorium intybus L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական
43. Cirsium ciliatum (Murr.) Moench - Գեղավեր, Տատասկ թարթիչավոր
44. Hieracium cymosum L. - Ճուռակախոտ հովանոցանման

45. Lactuca serriola L. - Մառոլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց
46. Tanacetum argyrophyllum (C. Koch) Tzvel. - Տարկավան, Լվածաղիկ արծաթատերև
47. Lathyrus miniatus Bieb. ex Stev.(ERE=Lathyrus rotundifolius Willd. ssp. miniatus…) - Տափոլոռ զինջարակազույն
48. Lotus caucasicus Kuprian. ex Juz. - Եղջերառվույտ կովկասյան
49. Medicago minima (L.) Bartalini - Առվույտ փոքրիկ
50. Medicago sativa L. var parviflora Grossh. - Առվույտ ցանովի
51. Melilotus officinalis (L.) Pall. - Իշառվույտ դեղատու
52. Trifolium repens L. - Երեքնուկ սողացող
53. Trigonella radiata (L.) Boiss. - Հացիամեմ ճառագայթային
54. Erodium cicutarum (L.) L'Her. - Ճայկտուց խնդամոլային
55. Puschkinia scilloides Adam - Պուշկինիա մկնասոխանման
56. Lamium album L. - Խուլ եղինջ սպիտակ
57. Nepeta mussinii Spreng. - Կատվադաղձ Մուսինի
58. Scutellaria karjaginii Grossh. (ERE=Scutellaria orientalis L. subsp. karjaginii (Grossh.) Fed.) – Սաղավարտուկ
59. Stachys inflata Benth. - Աբեղախոտ փքված
60. Teucrium polium L. - Լերդախոտ ալեհեր
61. Thymus kotschyanus Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի
62. Ziziphora rigida (Boiss.) Stapf (ERE=Ziziphora fasciculata C. Koch. ex Grossh.) - Ուրցաղաղձ կոշտ
63. Peganum harmala L. - Սպանդ սովորական
64. Plantago major L. - Ջղախոտ, Եզան լեզու մեծ
65. Acantholimon armenum Boiss. - Ոզնաթուփ հայկական
66. Cynodon dactylon (L.) Pers. - Շնատակ, Արվանտակ մատնաձև, Բերմուդյան խոտ
67. Dactylis glomerata L. - Ոզնախոտ հավաքված
68. Elytrigia juncea (L.) Nevski - Չաիր, Սեզ կնյունային
69. Festuca sclerophylla Boiss. ex Bisch. - Շյուղախոտ կոշտատերև
70. Hordeum murinum L. - Գարի մկնային, Մկնագարի
71. Koeleria albovii Domin subsp. caucasica (Domin) Tzvelev - Բարակոտնուկ Ալբովի
72. Phleum pratense L. - Սիզախոտ մարգագետնային
73. Poa annua L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ միամյա
74. Ephedra procera Fisch. et C.A. Mey. - Սարի չամիչ բարձր
75. Taraxacum officinale Wigg. - Խատուտիկ դեղատու
76. Tomanthea daralaghezica (Fomin) Takht. - Տոմանթեա Դարեղեգիսի
77. Tussilago farfara L. - Տատրակ սովորական, Խոճկորիկ
78. Xanthium italicum Moretti - Դառնափուշ, Դառնուկ իտալական
79. Xanthium spinosum L. - Դառնափուշ, Դառնուկ ասեղնավոր
80. Xeranthemum squarrosum Boiss. - Չորաբույս, Անմեռուկ չռված
81. Heliotropium ellipticum Ledeb. - Արևադարձ էլիպսաձև
82. Myosotis daralaghezica T.N. Pop. - Անմոռուկ դարալագյազի
83. Onosma setosa Ledeb.(ERE=Onosma armeniaca Klok. ex M.Pop.) - Իշհոտոտ խոզանավոր
84. Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ սոխուկավոր
85. Stipa capillata L. - Սմբուլ, Փետրախոտ մազոտ

86. Polygonum aviculare L. - Մատիտեղ ճնճղուկի
87. Rumex acetoselloides Bal. - Ավելուկ ավելուկանման
88. Reseda lutea L. - Հափուկ դեղին
89. Rhamnus pallasii Fisch. et C.A. Mey. - Դժնիկ քաղցր
90. Cotoneaster integerrimus Medik. - Ցմենի ամբողջաեզր

Բուն ուսումնասիրվող տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան, քանի որ այն ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, իսկ բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն նախատեսվող աշխատանքների համար ընտրված տեղամասերում բուսականությունը գրեթե բացակայում է: Ուստի դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Ըստ ճարտարապետաերկրաբանական ուսումանսիրության տվյալների կառուցապատման ենթակա տարածքում բուսաշերտը բացակայում է: Տարածքում առկա ծառերը տեղայնացված են կառուցապատման ենթակա տարածքից անջատ:

Դպրոցի տարածքում կան պտղատու ծառեր (գոյություն ունեցող դպրոցի կողմից նայելիս տարածքի ձախ մասում) և դեկորատիվ (աջ կողմում) տնկիներ, որոնք շինարարության հետևանքով որևէ վնաս չեն կրի:

5.2.8. Կենդանական աշխարհ

Կաթնասուններ

Տեղանքին բնորոշ կաթնասուններից առավել տարածված են՝ Անտառային քնամուկ (Myoxus glis), Անտառային մուկ (Apodemus sylvaticus), Պարսկական ավազամուկ (Meriones persicus), Լայնականջ ոզնի (Hemiechinus auritus) – գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում վտանգված կարգավիճակով, Հասարակական դաշտամուկ (Microtus socialis), Վինոգրադովի ավազամուկ (meriones vinogradovi), Մոխրագույն համստերիկ (Cricetulus migratorius), Փոքրասիական համստեր (Mesocricetus brandti), Սովորական դաշտամուկ (Microtus arvalis), Լեռնային կուրամկնիկ (Ellobius lutescens), Գորշ արջ (Ursus arctos) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով, Աքիս (Mustela nivalis), Քարակզաքիս (Martes foina), Գայլ (Canis lupus), Սովորական աղվես (Vulpes vulpes),

Նապաստակ (Lepus europaeus):

Սողուններ և երկենցաղներ

Տարածաշրջանի հերպետոֆաունան ներկայացված է՝ Որդանման կույր օձ (Typhlops vermicularis), Արևմտյան վիշապիկ (Eryx jaculus), Բազմագույն սահնօձ (Hemorrhois ravergieri), Կապարագույն սահնօձ (Hemorrhois nummifer), Ձիթապտղագույն սահնօձ (Platyceps najadum), Կարմրափոր սահնօձ (Hierophis schmidti), Հայկական էյրենիս (Eirenis punctatolineatus), Կովկասյան գյուրզա (Vipera (Macrovipera) lebetinaԿանաչ դոդոշ (Bufo viridis), Փոքրասիական ծառագորտ (Hyla savignyi), Փոքրասիական գորտ (Rana macrocnemis), Վալենտինի ժայռային մողես (Darevskia valentini), Գեղիրան օձագլուխ (Ophisops elegans Menetries), Միջին մողես (Lacerta media), Կովկասյան ագամա (Laudakia caucasia), Ռադդեի ժայռային մողես (Darevskia raddei), Շերտավոր մողես (Lacerta strigata), Շտրաուխի մողեսիկ (Eremias strauchi Kessler), Ոսկեգույն մաբույա Trachylepis septemteaniata)- գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով:

Թռչուններ

Թռչուններից տարածաշրջանում հանդիպող տեսակներն են՝ Փուփուլավոր արտույտ (Galerida cristata), Մոխրագույն արտույտ (Calandrella rufescens), Անտառային արտույտ (Lullula arborea), Սպիտակ խաղտտնիկ (Motacilla alba), Սովորական քարաթռչնակ (Oenanthe Oenanthe), Սև կեռնեխ (Turdus merula), Սոսնձակեռնեխ (Turdus viscivorus), Անապատային մորեհավ (Hippolais languida), Դալուկ մորեհավ (Hippolais pallida), Ծնկլտան գեղգեղիկ (Phulloscopus collybitus), Մոխրագույն շահրիկ (Sylvia communis), Մեծ երաշտահավ (Parus major), Ժայռային փոքր սիտեղ (Sitta neumayer), Ոսկեգույն մեղվակեր (Merops apiaster), Սևուկ կարմրատուտ (Phoenicurus ochruros), Պարող քարաթռչնակ (Oenanthe isabelliina), Սևախայտ քարաթռչնակ (Oenanthe hispanica), Կորեկնուկ (Miliaria calandra), Քարակաքավ (Alectoris chuker), Լոր (Coturnix coturnix), Թխակապույտ աղավնի (Columba livia), Սովորական կկու (Cuculus conorus), Խայտաբղետ փայտփոր (Dendrocopos major), Սովորական դրախտապան (Emberiza citronella), Լեռնային դրախտապան (Emberiza cia), Ամուրիկ (Fringilla coelebs), Սովորական սերինոս (Fringilla mantifringilla), Կարմրակատար

(Carduelis carduelis), Կարմրաճակատ սերինոս (Serinus pusillus), Կանեփնուկ (Carduelis cannabina), Սովորական ոսպնուկ (Carpodacus erythrinus), Տնային ճնճղուկ (Passer domesticus), Ժայռային ճնճղուկ (Petronia petronia), Սովորական սարյակ (Sturnus vulgaris), Անտառային կաչաղակ (Garrulus glandarius), Սովորական կաչաղակ (Pica pica), Մոխրագույն ագռավ (Corvus corone), Մեծ ճուռակ (Buteo buteo), Սովորական հողմավար բազե (Falco tinnunculus), Հոպոպ (Upupa epops), Ժուլան (Lanius cristatus), Եղնջաթռչնակ (Troglodytes troglodytes), Սպիտակախածի կեռնեխ (Turdus torquatus), Կապույտ քարակեռնեխ (Monticola solitarius), Գյուղական ծիծեռնակ (Hirundo rustica), Քաղաքային ծիծեռնակ (Delichon urbicum), Սև մագաղաթև ծիծեռնակ (Apus apus), Ներկարար (Coracias garrulus) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով, Ժայռային մեծ սիտեղ (Sitta tephronota) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով:

Ցամաքային անողնաշարավորներ

Տարածքի ցամաքային անողնաշարավորների վերաբերյալ հասանելի գրականության տվյալներ չկան, ուստի ստորև բերված տեղեկատվությունը Վայոց ձորի մարզի կտրվածքով է: Վայոց ձորի մարզի (ինչպես նաև ամբողջ Հայաստանի) անողնաշար կենդանիները ուսումնասիրված են խիստ անհավասարաչափ, ուստի անողնաշարավորների ֆաունայի ամբողջական վերլուծությունը անհնար է և աննպատակահարմար: Ստորև բերված տվյալները մի շարք համեմատաբար լավ ուսումնասիրված բարձրագույն տաքսոնների (կարգաբանական խմբերի) վերաբերյալ է: Այս տաքսոնները կազմում են Հայաստանի ֆաունայի մոտ 1/8-դը, ունեն զանազան էկոլոգիական կապեր, ուստի բերված տվյալները բավական ռեպրեզենտատիվ են (ներկայացուցչական):

Ընդհանուր առմամբ Վայոց ձորի մարզից հայտնի են անողնաշար կենդնաիների 70 կարգերի ներկայացուցիչներ, առավել բազմաթիվ են միջատները՝ 28 կարգ Հայաստանից հայտնի 30-ից: Փափկամարմինները, սարդակերպերը և բազմառտանիները ներկայացված են 7-ական, խեցգետնակերպերը՝ 5 կարգով: Չկան աշխատություններ, հատկապես նվիրված Վայոց ձորի անողնաշարների որևէ խմբին: Հայաստանի ֆաունայի տարբեր բարձրագույն կարգաբանական խմբերին նվիրված ակնարկային աշխատությունների

վերլուծությունը թույլ տվեց հայտնաբերել Վայոց ձորի մարզից 1213 տեսակ, որոնք պատկանում են Միջատների դասին և Փափկամարմինների տիպին

Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում գրանցված հազվադեպ և անհետացող 155 անողնաշար կենդանատեսակներից Վայոց ձորի մարզում ներկայացված են 29-ը (2 փափկամարմին և 27 միջատ):

ՀՀ Կարմիր գրքում, ԲՄՊՊ Կարմիր ցուցակում, ինչպես նաև Բեռնի կոնվենցիայի հավելված II -ում գրանցված անողնաշար կենդանիների ցանկ բերված է աղյուսակ 3-ում:

Հարկ է նշել, որ այս տեսակներից 22-ը հայտնի է Արփա գետի հովտի միայն հարավային մասից՝ Դարալագյազի լեռնաշղթայից, ուստի, նրանց հանդիպելը հետազոտվող տարածքներում շատ քիչ հավանական է:

Թվարկված տեսակներից Նմանաձև ճպուռը, Կպչուկի իլիկաթիթեռը, Պրոզերպինա իլիկաթիթեռը գրանցված են Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում (IUCN Red List os Threatened Species), իսկ Մնեմոզինա կամ սև ապոլոն, Ապոլոն, Ալեքսանոր առագաստաթիթեռ, Կպչուկի իլիկաթիթեռ, Պրոզերպինա իլիկաթիթեռ – նաև Բերնի կոնվենցիայի Հավելված 2-ում (Annex II of Bern Convention):

Հարկ է նշել, որ բուն ուսումնասիրվող տարածքնում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների չկան, ինչը բացատրվում է այդ տարածքի բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված և տեղանքը բավականին ուրբանիզացված լինելու հանգամանքով: Կան, սակայն, մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը, կամ որոշ թռչնատեսակներ):

Այսպիսով, ուսումնասիրվող տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես ել կենդանիների հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

5.2.9. Վտանգված էկոհամակարգեր և պահպանվող տարածքներ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60-70%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

13	«Մարգահովտի» պետական արգելավայր
14	«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր
15	«Կովկասյան մրտավարդի» պետական արգելավայր
16	«Ախնաբաթի կենու պուրակ» պետական արգելավայր
17	«Գետիկի» պետական արգելավայր
18	«Արզական-Մեղրաձորի» պետական արգելավայր
19	«Բանքսի սոճու» պետական արգելավայր
20	«Արագածի ալպյան» պետական արգելավայր
21	«Գիհու նոսրանտառային» պետական արգելավայր
22	«Արարատի որդան կարմիր» պետական արգելոց
23	«Խոր Վիրապ» պետական արգելոց
24	«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր
25	«Եղեգիսի» պետական արգելավայր
26	«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր
27	«Ջերմուկի անտառային» պետական արգելավայր
28	«Հերհերի նոսրանտառային» պետական արգելավայր
29	«Սև լիճ» պետական արգելավայր
30	«Գորիսի» պետական արգելավայր

ՆԿ 8. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Ուսումնասիրվող տարածքներին մոտ գտնվող բնության հուշարձանները երկուսն են՝ «Գրավի» աղբյուր ՝ Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում,

ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա, և «Ջրովանք» աղբյուր՝ Վայոց ձորի մարզ, Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Ջրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա:

Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Ուսումնասիրվող տարածքից ավելի քան 10կմ հեռավորության վրա է գտնվում «Եղեգիս» պետական արգելավայրը: Հաշվի առնելով արգելավայրի հեռավորությունը ուսումնասիրվող տեղամասից, կարելի է փաստել, որ նախատեսվող աշխատանքները ազդեցություն չեն ունենա արգելավայրի վրա:

5.2.10. Պատմամշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության կողմից 2002 թ. հաստատված ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված են Գետափ բնակավայրում գտնվող թվով 7 պատմամշակութային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև աղյուսակի միջոցով:

Ուսումնասիրվող հողատարածքին մոտ կամ հարակից տարածքներում պատմամշակութային հուշարձաններ չեն դիտարկվում:

Հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կողոր	համարանիշ	նշան,	հավելյալ նշումներ
Ամրոց «Դադայի»	մ.թ.ա. 2-1 հզ	2 կմ հս-ամ	—	11.14/1	Հ	Գետափ.- Շատին հին ճանապարհի ձախ եզրին, ջրհան կայանի մոտ
Բնակատեղի	մ.թ.ա. 2-1 հզ		—	11.14/1.1	Հ	
Բնակատեղի	մ.թ.ա. 2-1 հզ, 9-17 դդ.	4 կմ հս	—	11.14/2	Հ	Գետափ - Շատին ճանապարհի աջ եզրին
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ		—	11.14/2.1	Հ	
Գերեզմանոց	9-17 դդ.		—	11.14/2.2	Տ	բնակատեղիի հվ մասում, մայրուղու եզրին բարձրացող բլրին
Խաչքար	12-13 դդ.	2 կմ ամ	—	11.14/3	Հ	Դադայի ամրոց տանող ճանապարհին, կանգնեցված
Կամուրջ	19 դ.	2 կմ հս-ամ	—	11.14/4	Տ	Դադայի ձորով հոսող վտակի վրա պահպանվում է «Դադայի» ամրոցի պահպանական գոտու սահմաններում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1971 թ.	գ. մ.	—	11.14/5	Տ	

[5]

Աղյուսակ 8. Գետափ բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձաններ

6. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԸ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի՝ 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ տվյալների, Վայոց ձորի մարզի Գետափ բնակավայրի մշտական բնակչության թիվը կազմել է 1,350 մարդ: Բնակչության մեծ մասը զբաղված է գյուղատնտեսությամբ, հիմնականում խաղողագործությամբ և անասնաբուծությամբ:

Վայոց ձորի մարզի Գետափ բնակավայրը առանձնանում է իր սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով: Բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքում, որը հայտնի է իր գյուղատնտեսությամբ ու բնական ռեսուրսներով: Գետափը ունի համեմատաբար փոքր բնակչություն, բայց ակտիվ է գյուղատնտեսության բնագավառում՝ հատկապես խաղողի և այլ բերքերի արտադրությամբ, ինչի շնորհիվ

[5] https://hy.wikipedia.org/wiki, քաղված է ՀՀ կառավարության 17 հունիսի 2003 թվականի N 754-Ն որոշումից

ստեղծվում է գյուղատնտեսական ապրանքների տեղական շուկա: Մարզում և մասնավորապես Գետափում բավականին զարգացած է անասնաբուծությունը, որը հանդիսանում է տնտեսական գործունեության կարևոր ոլորտներից մեկը: Սոցիալական ոլորտում գյուղի բնակիչները հասանելիություն ունեն հիմնական ծառայություններին՝ կրթություն, առողջապահություն և մշակույթ: Գետափը գտնվում է հարևան համայնքներին մոտ, ինչպիսիք են Եղեգնաձորը, որտեղ գործում են կրթական, առողջապահական և այլ կարևոր սոցիալական ենթակառուցվածքներ: Գյուղի ներքին ենթակառուցվածքները աստիճանաբար բարելավվում են՝ ներառելով նոր ճանապարհներ և առևտրի կետեր:

Եղեգնաձոր համայնքի ենթակառուցվածքները ներկայացված են ստորև աղյուսակի[6] ձևով:

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	27
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	54
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	51
6.2 Էքսկավատորների քանակը	12
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	9
6.4 Գրեյդերների քանակը	3
6.5 Աղբատար մեքենաների քանակը	7
6.6 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.7 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.8 Ավտոաշտարակների քանակը	3
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	6
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	5
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

Աղյուսակ 9. Եղեգնաձոր համայնքի ենթակառուցվածքները

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Վայոց ձորի Գետափ բնակավայրի փողոց 10, թիվ 1 հասցեում կառուցվող 288 աշակերտի համար դպրոցի տեղակապման նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատուի /Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի/ կողմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայն ՀՀՇՆ պահանջների: Ներկայացված նախագծով

[6] http://vdzor.mtad.am/u_files/file/vdzor/Hamaynqner/

բարեկարգման տարածքը զբաղեցնում է 855,8 քմ, իսկ կանաչապատման տարածքը՝ 20508 քմ:

Նախագծի համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը, հողամասի կադաստրային վկայականն ու տարածքի գեոդեզիական հանույթը: Նախագծման ընթացքում հաշվի են առնվել պատվիրատուի պահանջներն ու առաջարկությունները:

Դպրոցի ներկայիս շինությունը նախատեսվում է քանդել փուլերով ապա կառուցել նախագծով նախատեսված նոր շենքը: Նոր դպրոցական համալիրը կառուցվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում, ու նախատեսված է 288 աշակերտի համար և բաղկացած է չորս (4) մասնաշենքերից, որոնք իրարից առանձնացված են հակասեյսմիկ կոնստրուկտիվ կարերով: Դպրոցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ ե/բ հիմնակմախքով, միաձույլ ծածկերով և դիաֆրագմա ծառայող միաձույլ երկաթբետոնյա արտաքին և ներքին պատերով: Արտաքին պատերը և վերնածածկը ջերմամեկուսացվում են: Հիմքերը ժապավենային են: Տանիքները լանջավոր են: Շենքերի մուտքերի մոտ նախատեսված են թեքուղիներ: Նախագծով նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձանց համար սանհանգույցներ, ինչպես նաև վերելակ, ներքին ջեռուցման և օդափոխության համակարգեր: Շինության ջեռուցումն ապահովվելու է կառուցվող կաթսայատան միջոցով: Կառուցվելու են նոր կաթսայատուն ու ինժեներական ցանցեր, տանիքում տեղադրվելու են արևային մարտկոցներ: Իրականացվելու է դպրոցի տարածքի ցանկապատում և բարեկարգում: Նախատեսվում են նոր կանաչապատ գոտիներ և ծառատունկ:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձված մի շարք կարևոր հարցերին: Դպրոցն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին: Շենքի մուտքերի մոտ նախատեսված են թեքուղիներ, իսկ ներսում՝ հաշմանդամների համար վերելակ և սանհանգույց:

Նախատեսվող գործունեության արդյունքների հիմնական ցուցանիշները ներկայացված են ստորև աղյուսակի միջոցով:

ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Մասնաշենքի թիվը	Հատ	**4**
Կառուցապատման մակ.	մ²	**2692,3**
Դպրոցի տարողունակություն	Տեղ	**288**
Ընդհանուր մակերես	մ²	**7326,1**
Ստորգետնյա	մ²	**1539,9**
Վերգետնյա	մ²	**5786,2**
Մեկ աշակերտին ընկնող ընդհանուր մակ.	մ²	**25,4**
Մեկ աշակերտին ընկնող ուսումնական մակ.	մ²	**20**
Ուսումնական սենյակների քանակ	Հատ	**20**
Ուսումնական սենյակների մակերեսը	մ²	**1352.0**
Հիմնական սենյակների մակերես		
Հանդիսությունների դահլիճ	մ²	**277,9**
Մարզադահլիճ	մ²	**281,4**
Ուսուցչանոց	մ²	**23,9**
Բուժկետ	մ²	**24,4**
Գրադարան	մ²	**100,9**
Ինժեներական ցանցեր		
Էլ. Սնուցում	կվտ-ժամ	**114**
Ջրամատակարարում	լ/վրկ	**1,9**
Կոյուղի	լ/վրկ	**3,5**
Տանիք		
Ընդհանուր մակերես	մ²	**2650մ²**
Ջեռուցում		
Կաթսաների քանակ	Հատ	**3**
Պահանջվող հզորություն	կվտ-ժամ	**465/423/ 74**
Կաթսայատան մակերես	մ²	**26,38**
Բարեկարգում և կանաչապատում		
Ընդհանուր տարածքը	մ²	**23,200**
Սալվածքներ	մ²	**855,8**
Ասֆալտապատման մակերես	մ²	**2958,14**

Կանաչապատման մակերես	մ²	**20,508**
Բաց մարզադաշտ	մ²	**810**
Բաց մարզահրապարակ	մ²	**479**

Աղյուսակ 10. Կառուցապատման հիմնական ցուցանիշները

Դպրոցի նախագծային լուծումներում ներառվել են դպրոցի տարրական, միջին և ավագ դպրոցների հոսքերը, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, վարչական մասնաշենքերը, նոր կաթսայատունը, բացօթյա մարզահրապարակը և խաղահրապարակը:

Տարածքն ունենալու է մեկ գլխավոր մուտք: Շինությունը կազմված է լինելու չորս մասնաշենքերից/Ա,Բ,Գ,Դ/, որոնցից երկու կենտրոնական մասնաշենքերը լինելու են նկուղային հարկով:

- 1-ին կիսանկուղային հարկը `-3,000 նիշում,
- Առաջին հարկ` 0,000 նիշում,
- 2-րդ հարկ` 3,600 նիշում
- 3-րդ հարկ` 7,200նիշում:

Դիտարկվող տարածքում մինչև մինչև 2,0 մ խորությամբ առկա են ստորերկրյա ջրեր: Դպրոցի երկու մասնաշենքերում նախատեսվում է նկուղային հարկերի կառուցում, անհրաժեշտ է ապահովել հուսալի ջրամեկուսացում և ջրահեռացման համակարգեր՝ նկուղային հարկերի ջրահոսքից պաշտպանման նպատակով:

Տեխնիկական լուծումները ներառում են՝

- Նկուղների արտաքին պատերի և հատակի ամբողջական ջրամեկուսացում:
- Շրջակայքում ջրահեռացման համակարգի (դրենաժ) տեղադրում՝ ստորգետնյա ջրերի կուտակումից խուսափելու համար:
- Նկուղային հարկերի հատակի լրացուցիչ պաշտպանիչ բետոնային շերտի կիրառում:

Կառուցվելու է կաթսայատուն, սեպտիկ հոր, ֆուտբոլի ու բասկետբոլ-վոլեյբոլի դաշտեր: Բոլոր մասնաշենքերի տանիքները լինելու են երկթեք, ծածկերը՝ միաձույլ ե/բետոն, հիմքերը՝ ժապավենային:

Դպրոցի սպորտային հրապարակները լինելու են ռետինե ծածկույթով։

Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII- 8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի,

«Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա։

Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով։

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան։ Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- ջեռուցման համակարգերին.
- տաք ջրամատակարարման համակարգերին.
- օդի լավորակման համակարգերին.
- ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- լուսավորության համակարգերին։

Դպրոցի տարածքաներն ըստ հարկերի և զբաղեցրած մակերեսի ներկայացված են ստորև աղյուսակների միջոցով։

ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՍԵՆՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ -3,300 ՆԻՇՈՒՄ

ЭКСПЛИКАЦИЯ ПОМЕЩЕНИЙ ПОДВАЛЬНОГО ЭТАЖА на отм. -3,300

N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՄԱԿԵՐԵՍ մ² ПЛОЩАДЬ м²
1	Նկուղային տարածք Подвальное помещение	701,0
2	Միջանցք Коридор	206,0
3	Աստիճանավանդակ Лестничная клетка	20,7
4	Աստիճանավանդակ Лестничная клетка	18,3
5	Հակահրդեհային ջրապաշարի պահոց Бак внутреннего пожаротушения	50,4
6	Սերվերային սենյակ Серверная	20,4
7	Հրանգարան Тир	125,3
8	Զենքի պահեստ Оружейная	17,6
9	Էլեկտրաբաշխիչակային Электрощитовая	16,2
10	Պահեստ Склад	122,8
11	Խոհանոց Кухня	131,1
12	Ճաշարանային սպասքի լվացում Моечная столовой посуды	4,2
13	Խոհանոցային սպասքի լվացում Моечная кухонной посуды	4,2
14	Սթերլի պահեստ Кладовая продуктов	18,8
15	Սթերլի պահեստ Кладовая продуктов	18,8
16	Սառնարանային Холодильная	16,5
17	Անձնակազմի հանդերձարան Гардеробная персонала	10,2
18	Անձնակազմի սանհանգույց Санузел для персонала	2,2
19	Անձնակազմի ցնցուղարան Душевая для персонала	1,8
20	Աղջիկների սանհանգույց Санузел для девочек	14,7
21	Տղաների սանհանգույց Санузел для мальчиков	11,8
22	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3,0
23	Հավաքարարի պահարան Кладовая уборочного инвентаря	12,8

ՆԿ 9. Նկուղային հարկ (-3,000)

ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՍԵՆՅԵՐԻ ՍԵԿՆՈՒԹՅՈՒՆ 0,000 ՆԻՇՈՒՄ

ЭКСПЛИКАЦИЯ ПОМЕЩЕНИЙ ПЕРВОГО ЭТАЖА на отм. 0,000

N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՍԱՀՄԵՐԸ մ² ПЛОЩАДЬ м²	N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՍԱՀՄԵՐԸ մ² ПЛОЩАДЬ м²
1	Մուտքային հողմակոզ Входной тамбур	16,9	25	Տնտեսական աշխատասենյակ Кабинет зам.директора по хозяйству	19,5
2	Նախասրահ Вестибюль	340,3	26	Տնօրենի սանհանգույց Санузел директора	3,2
3	Տարրական դպրոցի ռեկրեացիա Рекреация начальной школы	135,9	27	Բժշկի սենյակ Кабинет врача	30,6
4	Միջին և ավագ դպրոցի ռեկրեացիա Рекреация средней и старшей школы	147,9	28	Պահակակետ Пункт охраны	14,8
5	Աստիճանավանդակ Лестничная клетка	20,7	29	Հանդերձարան Гардеробная	17,8
6	Աստիճանավանդակ Лестничная клетка	20,7	30	Տարրական դպրոցի աղջիկների սանհանգույց Санузел для девочек начальной школы	14,7
7	Աստիճանավանդակ Лестничная клетка	15,3	31	Տարրական դպրոցի տղաների սանհանգույց Санузел для мальчиков начальной школы	11,8
8	I դասարանի դասասենյակ Классная комната I класса	62,0	32	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3,0
9	II դասարանի դասասենյակ Классная комната II класса	62,0	33	Հավաքարարի պահարան Кладовая уборочного инвентаря	5,2
10	Ներառական կրթության սենյակ Комната инклюзивного образования	62,0	34	Միջին և ավագ դպրոցի աղջիկների սանհանգույց Санузел для девочек средней и старшей школы	14,7
11	Տարրական դպրոցի մարզասրահ-խաղասենյակ Спортзал-игровая начальной школы	125,7	35	Միջին և ավագ դպրոցի տղաների սանհանգույց Санузел для мальчиков средней и старшей школы	11,8
12	Կենսաբանության կաբինետ Кабинет биологии	63,2	36	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3,0
13	Լաբորանտական Лаборантская	28,5	37	Միջանցք Коридор	25,0
14	V դասարանի դասասենյակ Классная комната V класса	62,0	38	Մարզիչի սենյակ Комната тренера	12,4
15	Քիմիայի կաբինետ Кабинет химии	67,2	39	Սանհանգույց Санузел	3,6
16	Լաբորանտական Лаборантская	28,5	40	Հավաքարարի պահարան Кладовая уборочного инвентаря	2,0
17	Ճաշարան բաշխման գոտով Обеденный зал с раздаточной	147,0	41	Աղջիկների հանդերձարան Раздевальная девочек	12,5
18	Հանդիսությունների դահլիճ Актовый зал	213,9	42	Ցնցուղարան Душевая	3,3
19	Բեմ Сцена	51,4	43	Սանհանգույց Санузел	2,3
20	Դերասանների հանդերձարան Артистическая	20,4	44	Տղաների հանդերձարան Раздевальная мальчиков	12,5
21	Դերասանների հանդերձարան Артистическая	20,4	45	Ցնցուղարան Душевая	3,3
22	Երաժշտության դասասենյակ Музыкальный класс	66,8	46	Սանհանգույց Санузел	2,3
23	Քարտուղարություն Секретариат	20,6	47	Միջին և ավագ դպրոցի մարզասրահ Спортзал средней и старшей школы	407,6
24	Տնօրենի աշխատասենյակ Кабинет директора	23,2	48	Մարզական զույգի սենյակ Снарядная	28,3

ՆԿ 10. Առաջին հարկ (0,000 նիշում)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՍԵՆՅԵՐԻ ՍԵԿՆՈՒԹՅՈՒՆ 3,600 ՆԻՇՈՒՄ

ЭКСПЛИКАЦИЯ ПОМЕЩЕНИЙ ВТОРОГО ЭТАЖА на отм. 3.600

N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՍԱՀՄԱՆԸ մ² ПЛОЩАДЬ м²	N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՍԱՀՄԱՆԸ մ² ПЛОЩАДЬ м²
1	Ցնցասրահ Фойе	340,5	22	Լաբորանտական Лаборантская	20,4
2	Տարրական դպրոցի ռեկրեացիա Рекреация начальной школы	135,9	23	Համակարգչային կաբինետ Кабинет компьютерного обучения	68,3
3	Միջին և ավագ դպրոցի ռեկրեացիա Рекреация средней и старшей школы	147,9	24	Հաշվապահություն, գանձապահ Бухгалтерия, касса	30,6
4	Աստիճանավանդակ Лестничная клетка	20,7	25	Հանդիսությունների դահլիճի սանդղասրահ Антресоль актового зала	51,7
5	Աստիճանավանդակ Лестничная клетка	20,7	26	Դահլիճի տեխնիկական կառավարման կետ Пункт технического управления зала	9,0
6	Աստիճանավանդակ Лестничная клетка	18,3	27	Խորդանոց Кладовая	5,4
7	III դասարանի դասասենյակ Классная комната III класса	62,0	28	Ուսանավարի աշխատասենյակ Кабинет завуча	24,2
8	IV դասարանի դասասենյակ Классная комната IV класса	62,0	29	Ուսանավարի աշխատասենյակ Кабинет завуча	24,2
9	Տարրական դպրոցի ուսուցչանոց Учительская начальной школы	62,0	30	Տարրական դպրոցի աղջիկների սանհանգույց Санузел для девочек начальной школы	14,7
10	Երկարօրյա խմբի սենյակ Комната продленного дня	72,2	31	Տարրական դպրոցի տղաների սանհանգույց Санузел для мальчиков начальной школы	11,8
11	Շախմատի դասասենյակ Классная комната для шахмат	54,9	32	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3,0
12	VI դասարանի դասասենյակ Классная комната VI класса	63,2	33	Հավաքարարի պահարան Кладовая уборочного инвентаря	5,2
13	VII դասարանի դասասենյակ Классная комната VII класса	62,0	34	Միջին և ավագ դպրոցի աղջիկների սանհանգույց Санузел для девочек средней и старшей школы	14,7
14	Ֆիզիկայի կաբինետ Кабинет физики	67,2	35	Միջին և ավագ դպրոցի տղաների սանհանգույց Санузел для мальчиков средней и старшей школы	11,8
15	Լաբորանտական Лаборантская	28,5	36	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3,0
16	Միջին և ավագ դպրոցի ուսուցչանոց Учительская средней и старшей школы	59,6	37	Ուսուցիչների / տղամարդկանց / սանհանգույց Санузел для учителей /мужской/	5,0
17	Ռազմագիտության կաբինետ Кабинет начальной военной подготовки	68,3	38	Ուսուցիչների / կանանց / սանհանգույց Санузел для учителей /женский/	5,0
18	Զենքի պահոց Комната хранения оружия	28,5	39	Անձնական հիգիենայի խցիկ Комната личной гигиены женщин	2,0
19	Ռոբոտաշինության կաբինետ Кабинет робототехника	68,3	40	Հավաքարարի պահարան Кладовая уборочного инвентаря	4,4
20	Լաբորանտական Лаборантская	20,4	41	Միջանցք Коридор	7,0
21	Տնամատության կաբինետ Кабинет домоводства	68,3			

ՆԿ 11. Երկրորդ հարկ (3,600 նիշում)

ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՍԵՆՅԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ 7.200 ՆԻՇՈՒՄ

ЭКСПЛИКАЦИЯ ПОМЕЩЕНИЙ ТРЕТЬЕГО ЭТАЖА на отм. 7.200

N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՄԱԿԵՐԵՍ մ² ПЛОЩАДЬ м²	N	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՄԱԿԵՐԵՍ մ² ПЛОЩАДЬ м²
1	Ճեմասրահ Фойе	340,5	16	Գրադարանի ընթերցասրահ Читальный зал библиотеки	49,2
2	Տարրական դպրոցի ռեկրեացիա Рекреация начальной школы	135.9	17	Գրապահոց Книгохранилище	23.9
3	Միջին և ավագ դպրոցի ռեկրեացիա Рекреация средней и старшей школы	147.9	18	Անհատական պրոպիլեների սենյակ Комната для индивидуальных занятий	24.2
4	Սանդնամատնյակ Лестничная клетка	20,7	19	Անհատական պրոպիլեների սենյակ Комната для индивидуальных занятий	24,2
5	Սանդնամատնյակ Лестничная клетка	20,7	20	Տարրական դպրոցի աղջիկների սանհանգույց Санузел для девочек начальной школы	14,7
6	Սանդնամատնյակ Лестничная клетка	18,3	21	Տարրական դպրոցի տղաների սանհանգույց Санузел для мальчиков начальной школы	11.8
7	Օտար լեզուների կաբինետ Кабинет иностранных языков	49,2	22	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3,0
8	VIII դասարանի դասասենյակ Классная комната VIII класса	51,5	23	Հավաքարարի պահոցան Кладовая уборочного инвентаря	5.2
9	Լինգաֆոնային կաբինետ Лингафонный кабинет	30.7	24	Միջին և ավագ դպրոցի աղջիկների սանհանգույց Санузел для девочек средней и старшей школы	14,7
10	IX դասարանի դասասենյակ Классная комната IX класса	62,0	25	Միջին և ավագ դպրոցի տղաների սանհանգույց Санузел для мальчиков средней и старшей школы	11,8
11	X դասարանի դասասենյակ Классная комната X класса	62.0	26	Հաշմանդամների սանհանգույց Санузел для инвалидов	3.0
12	XI դասարանի դասասենյակ Классная комната XI класса	63,2	27	Ուսուցիչների / տղամարդկանց / սանհանգույց Санузел для учителей /мужской/	5,0
13	XII դասարանի դասասենյակ Классная комната XII класса	62,0	28	Ուսուցիչների / կանանց / սանհանգույց Санузел для учителей /женский/	5,0
14	Գծագրության և կերպարվեստի կաբինետ Кабинет черчения и изобразительного искусства	51,5	29	Անձնական հիգիենայի խցիկ Комната личной гигиены женщин	2,0
15	Լաբորատորիա Лаборантская	26,5	30	Հավաքարարի պահոցան Кладовая уборочного инвентаря	4,4
			31	Միջանցք Коридор	4.3

ՆԿ 12. Երրորդ հարկ (7,200 նիշում)

7.1. Շինարարական հրապարակի նախապատրաստում և կահավորում

Շինարարական հրապարակի մոբիլիզցիայի և նախապատրաստման փուլում կիրականացվի տարածքի ժամանակավոր ցանկապատում, ցանկապատի վրա կտեղադրվի ժամանակավոր լուսավորություն և ցանկապատին կամրացվի պաստառ համապատասխան գրություններով: Շինարարության կազմակերպման նախագծին համապատասխան նշված տեղերում կտեղադրվեն վագոն-տնակներ և ժամանակավոր պատրաստի զուգարան-խցիկ աշխատողների համար:

Գոյություն ունեցող շինության ապամոնտաժման աշխատանքներին խանգարող բոլոր կոմունիկացիոն գծերը կանջատվեն նախապես: Համապատասխան տեղերից կանխավ կանջատվեն մասնաշենքը սնուցող էլեկտրական լարերը:

Դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է, որից արտադրական հրապարակը կազմում է 2560մ^2 մակերես:

Շին. հրապարակում լինելու են.

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն -1 հատ,
- փակ պահեստ՝ շինանյութի համար,
- լվացարան-ցնցուղարան,
- շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
- աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, հանդերձարան, սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան- ցնցուղարան, պատրաստի 1*1,5 չափերի զուգարանախցիկ/բիոզուգարան՝ լվացարանով/- 1 հատ,
- շինհրապարակում լինելու է նաև 1 հատ 7,30x3 մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ, ինչպես նաև հետադարձ ջրամատակարարումով պոմպ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան: Իսկ անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 100մ^3 չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և

անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ։

- Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով։



ՆԿ 13. Շինարարական հրապարակի կազմակերպման գծապատկեր 1



ՆԿ 14. Շինարարական հրապարակի կազմակերպման գծապատկեր 2

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով ցանկապատի միջոցով: Տեղադրվելու է 5,0մ լայնությամբ 2 դարպաս: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու՝ հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս: Շինհրապարակում նախատեսված է քանդած շինանյութի կուտակման, զտած շինանյութի տեղադրման, ինչպես նաև շինարարական աղբի կուտակման տարածքներ: Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ: Շինարարական նյութերը պահեստավորվելու են

շինհրապարակում:

7.2. Առկա շենքի ապամոնտաժման աշխատանքներ

Գործող դպրոցի տանիքները թիթեղյա են ՝ փայտե կոնստրուկցիաների հիման վրա: Պատերը քարից՝ պեմզաբլոկներ: Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և մեխանիզմներով՝ մի քանի փուլերով:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 7476,90մ³ շինաղբի տեսքով, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները կենթարկվեն երկրորդային օգտագործման, իսկ մնացածը տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Ապամոնտաժման և քանդման աշխատանքները կիրականացվեն փուլերով: 1-ին փուլում կապամոնտաժվեն բոլոր ճաղաշարերը, դուռ պատուհանները, ներսի սարքավորումները, կախովի առաստաղները, համընթաց կմաքրվեն և կհեռացվեն կենցաղային ու շինարարական թափոնները: Ապամոնտաժման աշխատանքների համար նախատեսվում է RDK-250 մակնիշի թրթուրավոր կռունկ՝ 1հատ, ավտովերհան ЗИЛ ВС-16 մակնիշի՝ 1 հատ, կողավոր ավտոմեքենա անցքավոր հավաքովի ե/բ սալերի տեղափոխման համար՝ 1 հատ, ավտոինքնաթափ շինաղբի տեղափոխման համար՝1հատ, բուլդոզեր՝ 1 հատ և էքսկավատոր՝ 1 հատ:

7.3. Շինարարության փուլ

7.3.1. Հողային աշխատանքներ

Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 12698,73 մ³ ծավալի հողային աշխատանքներ, հետլիցք՝4165,2մ³: Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ինժիներական ենթակառուցվածքների կառուցման համար նախատեսվող

աշխատանքներից: Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Յուրաքնչյուր 50սմ հաստությամբ շերտով ետլիցքից հետո կատարվելու է գրունտի չոր և թաց տոփանում: Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին. մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

7.3.2. Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

Տեխնիկատրանսպորտային միջոցի անվանում	**Քանակ/հատ**
Թրթուրավոր կռունկ	2
Էքսկավատոր	2
Ավտոինքնաթափ	2
Կցորդիչով ավտոմեքենա	1
Ավտովերհան	2
Ընդհանուր	**9**

Աղյուսակ 12. Շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներ

Օգտագործվելու են նաև ամբարձիչ, տրակտոր, բետոնախառնիչ, բետոնամղիչ պոմպ, եռակցման ապարատ, ասֆալտ կտրող գործիք, ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներ, ձեռքի տոփանիչ և այլն:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5^0 -ից

ոչ ավել թեքություն։

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից։ Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության։ Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում։ Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փոռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով։ Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով։

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում։

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով։

7.3.3. Էլեկտրամատակարարում

Դպրոցի շինարարության ընթացքում լինելու է ժամանակվոր էլեկտրամատակարարում։ Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ։

7.3.4. Ջրամատակարարում և ջրահեռացում

Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում։ Շինարարության համար ջուրը բերվելու է ճանապարհով անցնող ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ – հաշվիչ։ Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով։

7.3.5. Հրդեհաշիջման համակարգ

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման 1 վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով՝ 4 հատ: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

7.3.6. Աղբի հեռացում

Շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 7476,90մ3 ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Կատարվելու է քանդման արդյունքում առաջացած թափոնների տեսակավորում:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 5400կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է շինթույլտվությամբ սահմանված պահանջին համապատասխան: Կենցաղային աղբի հաշվարկը ներկայացված է Հավելվածներ բաժնում:

7.3.7. Բարեկարգում

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ:

7.3.8. Կանաչապատում

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 20,500մ2 մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով: Տնկվելու են կեղծ ռուբախ(ակացիա)՝ 8 հատ, հացենի՝ 11 հատ, բարդի՝ 5 հատ, եղևնի՝ 13 հատ, ընդհանուր՝ 37 հատ ծառեր:

7.4. Շինարարության իրականացման ժամանակացույցը

Աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 2,3 տարի կամ 28 ամիս: Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

7.5. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Դպրոցական շենքի կառուցման շինարարության և շահագործման փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, ինչպես նաև շահագործման փուլում՝ բնական գազ:

7. 5. 1. Ջրօգտագործում

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Շինարարության համար պահանջվող ժամանակավոր խմելու ջուրը վերցվելու է տարածքին կից ճանապարհով անցնող Գետափ բնակավայրի ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ: Նշված ջրատարը սպասարկվում է Վեոլիա Ջուր ՓԲԸ ընկերության կողմից, ջրամիացման տեխնիկական պայմանը ներկայացված է Հավելվածներ բաժնում:

Ջրցանի համար տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից տեխնիկական ջուր մատակարարող կազմակերպության կամ անձի հետ, որն ունի համապատասխան լիցենզիա: Պայմանագրում կհստակեցվի նաև ջրառի կետը: Տեխնիկական ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

- S_1 = 4050 մ² (ջրվող տարածքի մակերես)
- K_1 = 0.0015 մ³/օր/մ² (1 մ²-ի ջրցանի նորմատիվ)
- T = 250 օր (ջրցանի ժամանակահատված, ներառյալ կրկնակի ջրցանը)

Օրական միջին ջրածախսը՝

Մ1 = 4050 x 0.0015 x 250=1518,75 մ³/շին. ժամ. կամ 0,375 մ³/օր:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

WԸ.ï. = (n x N + n1 x N1) x T, որտեղ

- n = 5 (ԻՏ աշխատողների թիվ)
- N = 0.016 մ³/օր/մարդ (ԻՏԱ ջրածախսի նորմատիվ)
- n1 = 40 (սպասարկող աշխատողների թիվ)
- N1 = 0.025 մ³/օր/մարդ (սպասարկողների ջրածախսի նորմատիվ)
- T = 728 (աշխատանքային օրերի թիվ)

Wխ.տ.= (5 x 0.016 + 40 x 0.025) x 728 = 786,24մ³/շին. ժամ. 1,08մ³/օր:

Ընդհանուր ջրի սպառումը շինարարության փուլում՝

2304,99մ³/շին. ժամ:

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միանալու է Գետափ բնակավայրի ջրագծին: Իսկ ջրահեռացման համար նախատեսվում է մաքրման կայանի տեղադրում:

Ջրամատակարարման և կոյուղու հաշվարկային ելքերը կազմելու են.

- Սառը ջրամատակարարումը կազմելու է1,9լ/վրկ,
- տաք ջրամատարարումը՝ 0,8լ/վրկ,
- ներքին հակահրդեհային ջրամատակարարումը՝ 2x2.5 լ/վրկ,
- արտաքին հակահրդեհային ջրամատակարարումը՝ 10. լ/վրկ,
- կոյուղին՝ 3,5լ/վրկ:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

7.5.2. Շինարարության ընթացքում օգտագործվող նյութեր

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը՝ երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, կախովի ցեմենտի պանելներ, ֆիբրոցեմենտ, փայտ, մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր, բարձրորակ երեսապատման սալիկներ, տուֆ, ապակի, բարձրորակ սվաղ և ներկ։

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել մուգ մոխրագույն, դարչնագույն Ֆիբրոցեմենտային պանելներով՝ քարե շարվածքի նմանակմամբ։ Պատուհանները լինելու են ալյումինե, ջերմամեկուսիչ կամրջակով, երկշերտ ապակեփաթեթով։ Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետլախային խեցեսալիկներով։

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում։ Օգտագործվելու է B12.5 և B25 մակնիշի բետոն, որը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում։ Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով։ Բետոնախառնիչ մեքենայի սպասարկումը և լվացումը իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս, այդ նպատակով նախատեսված հատուկ տարածքում։

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից։ Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից։

Շինարարական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ նորմերով նախատեսված բարձրությամբ։ Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ։

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ

Նախատեսվող գործունեության իրականցման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Բացասական ազդեցությունները հնարավոր է կանխել կամ նվազագույնի հասցնել նախանշված մեղմացման միջոցառումների իրականացման արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

8.1. Օդային ավազան

Գործունեության իրականացման շինարարության փուլում տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ ծխագազերի և հողային աշխատանքների ընթացքում՝ փոշու տեսքով:

Վնասակ ար նյութը	Տեսակարա ր արտանետո ւմները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատվ ած: /2080ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36. 4	4. 2	32. 0
CH (ածխաջրածիններ)	0. 243	0. 028	0. 21
NO_2 (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42. 3	0. 11	8. 0
ՊՄ (պինդ մասնիկներ)	4. 3	0. 5	3. 7
Ծծմբային Անհիդրիդ		0. 006	0. 00832

Անկազմակերպ փոշու արտանետում		1. 3	1. 86

Աղյուսակ 13. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Հողային այլ աշխատանքների ժամանակ օդային ավազանի աղտոտման՝ փոշու արտանետման տեսանկյունից իրականացված, հաշվարկի վերջնական արդյունքը ցույց է տալիս, որ հողային աշխատանքների իրականացման (26 օր) ժամանակահատվածում արտանետված փոշին կազմելու է 1.86 տոննա:

Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է ժամանակավոր և կարճատև: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապահի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ նորմերը պահպանելու նպատակով: Հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ՝ օդային ավազան արտանետումները կանխարգելելու, մեղմելու նպատակով:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցությունները լինելու են կաթսայատան աշխատանքի արդյունքում, ինչը կաթսաների արդիականացման արդյունքում նվազագույնի կհասցվի, համեմատած գոյություն ունեցող կաթսայատան արտանետումների հետ: Կառուցվելու է նոր կաթսայատուն 26.38 քմ մակերեսի վրա:

Տեղադրվելու է 3 հատ կաթսա, յուրաքանչյուրը N=465/423կվտ և 1հատ՝ 74կվտ արտադրողականության: Կաթսաները համալրված են ավտոմատացված կառավարման այրիչներով: Կաթսայատունն աշխատելու է բնական գազով, անհրաժեշտության դեպքում ունենալու է պահեստային՝ դիզվառելիք: Կաթսայատան գազի ծախսը կազմելու է 104,3մ3/ժամ: Կաթսայատան գազամատակարարումը կատարվելու է հողատարածքի անցնող արտաքին ցանցից: Կաթսաների շահագործումից առաջացած վնասակար արտանետումները ներկայացված են ստորև աղյուսակի միջոցով:

	Կաթսայատուն	
	գ/վրկ	տ/տարի
NOx	0,07	0,99
CO	0,03	0,43

Աղյուսակ 14. Կաթսայատնից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը

Պահեստային դիզվառելիքով աշխատելու դեպքում դիզվառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա: Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում ներկայացվում է դիզելային վառելիքով: Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակում, իսկ հաշվարկը ներկայացված է Հավելվածում:

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO_2	CH	ՅՕՄ	CO	N_2O	CO_2[3]	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	31,38	4.3

Աղյուսակ 15. Դիզ վառելիքից առաջացած արտանետումներ

8.2. Հողային ռեսուրսներ

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողածածկը ավազակավային է՝ շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 20-25% պարունակությամբ՝ դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով: Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է կատարել 12698,73մ^3 ծավալի հողային աշխատանքներ, որից կատարվելու է 4165,2մ^3 ծավալի գրունտների ետլիցք իսկ մնացած՝ 8533,53մ^3 ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու է Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից հատկացված վայր՝ համայնքի համաձայնությամբ: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքի մեխանիկական գործիքներրով և մեխանիզմներով:

Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից։ Հողաբուսաշերտի հեռացում չի նախատեսվում, քանի որ կառոցապատման ենթակա տարածքներում այն բացակայում է։ Հողային ռեսուրսների վրա ազդեցությունները կբացառվեն հաշվետվությունում նախատեսված միջոցառումների կատարմամբ։

Իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրության արդյունքում ազդեցության ենթակա տարածքում բերրի հողի առկայություն չի բացահայտվել, այսինքն տարածքի այն հատվածներում, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ հողի վերին շերտը կազմված է ավազակավերից։

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն նախատեսվում։

8.3. Ջրային ռեսուրսներ

Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում։ Շինարարության համար ջուրը բերվելու է ճանապարհով անցնող ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ – հաշվիչ։ Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով։ Շահագործման փուլում դպրոցի խմելու ջուրը կմատակարարվի Գետափ բնակավայրի ջրամատակարարաման համակակարգից՝ պայմանագրային հիմունքներով։

8.4. Կեղտաջրերի հեռացում

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1.5*2.2մ չափերի 1 բիոզուգարանից։ Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է։ Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով։

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ։ Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի

կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Գետափ բնակավայրը կոյուղացված չէ, ուստի տեղադրվելու է 100մ³/օր հզորության ավտոմատացված համակարգով օժտված մաքրման կայան: Այն ապահովելու է կեղտաջրերի մաքրում մինչև 95%: Հորի կոնստրուկցիան իրականացվելու է B25 դասի անջրթափանց բետոնից: Պատերի արտաքին մակերեսը հիդրոմեկուսացվելու է երկշերտ բիտումային մածիկով: Ունենալու է օդափոխության խողովակ: Կեղտաջրերը հեռացվելու են կոյուղու պոլիէթիլենային բարձր խտության ծալքավոր խողովակներով՝ Ø150մմ: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կլոր հատվածքի ե/բ հավաքովի էլեմենտներից դիտահորեր: Մաքրման կայանը տեղադրվելու է ստորգետնյա, ծածկվելու է 150մմ հաստության ավազային պաշտպանիչ շերտով: Մաքրման արդյունքում առաջանալու է տիղմ, որը նստեցումից հետո վերադառնում է առաջին փուլ: Ավելցուկային տիղմը տեղափոխվելու է աղբավայր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Պարզեցված ջուրն ինքնահոս հեռացվելու է ավազի շերտերով ֆիլտրվելով: Առաջացած ջուրը կարելի է օգտագործել ոռոգման նպատակով, իսկ ավելացված ջուրը ստորգետնյա խողովակներով կմիանա համայնքային ոռոգման առվին:

8.5. Կենսաբազմազանություն

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, երկար տարիներ օգտագործվել է որպես դպրոցի տարածք:

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

8.6. Թափոններ

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Շինարարական աղբ, ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած, ծածկագիր՝ 9120060101004 ՝ (կարող է լինել ավազի, բետոնի, քարի և այլնի մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով), ներառյալ քանդման փուլից առաջացող շինաղբը՝ 7726.9մ³ ծավալով։
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 12420 կգ/տարի, շահագործման փուլում՝ 137520կգ/տարի։
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝8533,53մ³։
- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ 4կգ,
- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը-15%-ից ցածր՝ (ծածկագիրը 31402303 01 03 4)։
- ներկեր/ Լաքա-ներկանյութերի այլ թափոններ (ծածկագիր՝ 5550290001014)
- կարծրացված սոսնձի թափոններ(ծածկագիր՝ 55700600 01 01 4),
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5)։

Գործունեության ընթացքում առաջացող թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ պատկանում են 4 և 5-րդ դասերին։

Որոշ թափոններ (ներկեր, կարծրացված սոսինձ, յուղերով աղտոտված ավազ և այլն) քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերության կողմից, ելնելով փաստացի արդյունքներից։ Թափոնների փաստացի քանակների հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 14. 09. 2066թ. N1343-Ն որոշմանապահանջներից ելնելով՝ առաջացող թափոնների փաստացի ծավալների հիման վրա։

Գործունեությունից սպասվող կենցաղային աղբի հաշվարկները ներկայացված են Հավելվածներ բաժնում:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ, իսկ կենցաղային աղբը՝ 2 հատ աղբահավաք տարողության մեջ:

8.7. Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2- III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1- Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, աղմուկը լինելու է ոչ անընդմեջ, այլ կրելու է ժամանակավոր բնույթ:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, բնակավայրի տրանսպորտի շարժական ակտիվ գոտում, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ։

Հաշվարկների հիման վրա կարելի է եզրակացնել, որ բնակելի տարածքի համար 55 դԲԱ թույլատրելի չափի դեպքում շինարարական աշխատանքների աղմուկի առավելագույն մակարդակը (61-64դԲԱ) գտնվում է նորմայի սահմաններից բարձր, որի համար պետք է կիրառվեն մեղմացման միջոցառումներ :

Հաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ։

Շինարարության ընթացքում թրթռումները հիմնականում առաջանալու են հողային աշխատանքների ընթացքում, որոնց տևողությունը նախագծով հաշվարկվել է 416 ժամ։ Շինարարության ընթացքում աշխատելու են տարբեր շինարարական տեխնիկաներ։ Օգտագործվող շինարարական տեխնիկաների շահագործման ընթացքում առաջացող թրթռումների միջին ցուցանիշները ներկայացված են ստորև՝

Վիբրացիաի միջին հաշվարկային ցուցանիշ յուրաքանչյուր տեխնիկայի համար՝ հաշվի առնելով հողային աշխատանքների տևողությունը, ներկայացված է ստորև՝

- Էքսկավատոր՝ մոտ 0.5 m/s² ինտենսիվությամբ (հաշվարկի համար կարող ենք վերցնել միջին արժեքը)։
- Ավտոինքնաթափ՝ մոտ 0.5 m/s² ինտենսիվությամբ։
- Կցորդիչ ավտոմեքենա՝ մոտ 0.4 m/s² ինտենսիվությամբ։

Չնայած այն հանգամանքին, թե ինչ տեխնիկա է օգտագործվում, վիբրացիայի ազդեցությունը կարող է որոշակիորեն կուտակվել։ Ամեն դեպքում, հաշվարկները պետք է իրականացնել միջին արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով կուտակումը՝

Ընդհանուր վիբրացիա=1/5×(0.5+0.5+0.4)=0.28m/s2

Այս հաշվարկը ենթադրում է, որ բոլոր տեխնիկաները գործում են նույն ժամանակահատվածում, և մենք վերցնում ենք միջին վիբրացիայի մակարդակ՝ ստանալու ընդհանուր ազդեցությունը։ Նշենք, որ վիբրացիան տարածվում է տարածքում, և այն ավելի փոքր կդառնա հեռավորության վրա։ Միջին ազդեցությունը **0.28 m/s²** տատանվում է առավել մոտ տարածքում՝ մոտ 10-15 մետր հեռավորությամբ։

8.8. Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ: Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների և բարենպաստ է կառուցապատման համար: Շինարարության ընթացքում արտակարգ իրավիճակներից խուսափելու համար կպապանվեն անվտանգության նորմերը[7]:

8.9. Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Տարածքում առկա է Անդրանիկ Օզանյանին նվիրված հուշարձան, որը շինարարության ընթացքում ազդեցության չի ենթարկվի: Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են այլ պատմամշակութային արժեք ունեցող և բնության հուշարձանները: Ազդեցության ենթակա տարածքն երկար տարիներ կառուցապատված է եղել և Գետափ բնակավայրի վարչական տարածքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների վրա որևէ ազդեցություն չի ունենա:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (ԿԳՄՍ նախարարություն)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության, մասնավորապես ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման համաձայն հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման

[7] ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ, 14.01.2008, 07-Ն

դեպքում:

8. 10. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480* նորմերի:

Սոցիալական գործոններ.

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 45 մարդ, որից՝ 40 բանվոր, 5-ը տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը շինարարության փուլում սոցիալական ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ մոտ 45 մարդու համար: Նոր դպրոցի կառուցումը նպաստելու է համայնքում բնակչության զբաղվածության աճին, նոր ժամանակավոր աշխատատեղերի ստեղծմանը, որոշակիորեն կնպաստի նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

8.11. Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված

միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Դպրոցի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝

«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝ Էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ:

Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության փորձաքննության փուլում էներգաարդյունավետության սերտիֆիկատի ներկայացման պահանջը պարտադիր չէ:

Նոր կառուցվող դպրոցի և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի(N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

8.11.1. Արևային վահանակներ

Դպրոցի տանիքում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով: Կայանը կկառուցվի տանիքի 2650քմ մակերեսի վրա, որտեղ ԱՖՎՎ-ների զբաղեցրած մակերեսը կազմում է 521.82քմ, իսկ տարածքի մնացած մասը՝ 2128,18քմ, ծառայում է ենթակառուցվածքների սպասարկման համար: Տեղադրվելու է 550Վտ-127.6 կՎտ դրվածքային հզորությամբ 232 հատ արևային վահանակ:

Արևային ֆոտովոլտային համակարգերը էլեկտրական ցանցին կմիացվեն փոխհոսքերի հաշվառման սկզբունքով: Սպառողի մոտ տեղադրվելու է երկկողմանի հաշվիչ (դարձվափոխիչային): Կայանի համար ընտրված է 1 հատ 50 կՎտ և 1h 60կՎտ հզորությամբ գծային ցանցային փոխակերպիչներ: Արևային կայանի հողանցումն իրականացված է դպրոցի շենքին կից՝ կոշտ (շերտապողպատ 4*40) կամ ճկուն (ВВГ нг (А) 1x25) միացմամբ՝ միանալով շենքի ընդհանուր էլ. մատակարարման հողանցման համակարգին:

Արևային վահանակների մոդուլները պետք է երաշխավորված լինեն ելքային հզորության ոչ պակաս, քան 93%՝ շահագործման 10-րդ տարվա վերջում, և 84,8%՝ շահագործման 25-րդ տարվա վերջում: Մոդուլները պետք է երաշխավորվեն առնվազն 12 տարով, օգտագործված նյութերի թերությունների և աշխատողների հմտությունների պատճառով առաջացած խափանումների դեպքում ենթակա են փոխարինման: Փոխակերպիչները և ԱՖՎՎ-ները պետք է ապահովեն համապատասխան ստանդարտների և սերտիֆիկատների պահանջներին կամ ունենան համարժեք փաստաթղթեր որակի մասին:

Արևային ֆոտովոլտային համակարգը կտեղադրվի մասնագիտացված կազմակերպության կողմից շինարարական կապալառու կազմակերպության հետ կնքված պայմանագրային հիմունքներով, որը հետագայում կիրականացնի նաև վերականգման կամ վերանորոգման աշխատանքներ կարիքի առաջացման դեպքում: Շահագործման ընթացքում վնասված կամ խոտանված արևային վահանակները ամբողջությամբ կենթարկվեն վերամշակման մասնագիտացված սպասարկող կազմակերպության կողմից: Վնասված կամ խոտանված արևային վահանակների վերամշակման գործընթացը սկսվում է արտադրանքն ինքնին առանձնացումից՝

ալյումինե և ապակե մասերի ապամոնտաժմամբ: Գրեթե բոլոր (95%) ապակիները կարող են կրկին օգտագործվել, և բոլոր արտաքին մետաղական մասերն օգտագործվում են վահանակի շրջանակները վերափոխելու համար: Մնացած նյութերը մշակվում են 500°C ջերմաստիճանում ջերմամշակման սարքում՝ հեշտացնելու համար պանելային տարրերի բաժանումը: Ջերմությունը հանգեցնում է պարուրվող պլաստիկի գոլորշիացմանը՝ թողնելով սիլիկոնային բջիջները պատրաստ հետագա մշակման համար:

8.12. Լանդշաֆտ

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատված՝ նախկին դպրոցի տարածքում: Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

8.13. Բարեկարգում և Կանաչապատում

Շենքի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում՝ 433,50մ^2 մակերսով բետոնե սալիկներով և բազալտե եզրաքարերով:

Նախատեսվում է 810մ^2 մակերեսով ռետինե ծածկով խաղադաշտ, վազքուղի: Տարածքը ցանկապատվելու է 359.00գծմ երկարության մետաղական ճաղաշարով՝ 2 հատ դարպասով: Դպրոցի ներտարածքային ճանապարհները նախատեսված են երկշերտ ասֆալտով՝ բազալտե եզրաքարերով: Տեղադրվելու են նստարաններ, ցայտաղբյուր, հեծանվային կայանատեղիներ:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ։ Տնկվելու են կեղծ ռուբախ(ակացիա)՝ 8 հատ, հացենի՝ 11 հատ, բարդի՝ 5 հատ, եղևնի՝ 13 հատ, ընդհանուր՝ 37 հատ ծառեր։

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով։

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքում տեղադրվող մաքրման կայանից դուրս եկող հոսքաջրերի հաշվին՝ d300մ տրամագծով դրենաժային խողովակներով։

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ)։ ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին։

ԲԿՊ-ն, որը ներկայացված է Հավելվածներ բաժնում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին։

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարական աշխատանքների մասնակիցների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը։

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան

պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով ՀՏԶՀ-ի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիտորինգ, որի շրջանակներում ՀՏԶՀ-ի բնապահպանության մասնագետների կողմից՝ յուրաքանչյուր ենթածրագրի կտրվածքով, կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում: ՀՏԶՀ-ի հանձնարարականով տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու ՀՏԶՀ-ին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի գանգատներ:

10. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գետափի բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցապատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող աշխատանքների բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: Հանդիպումը տեղի է ունեցել 2025թ. փետրվարի 14-ին Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, որին մասնակցել են Վայոց Ձորի մարզպետարանի և Եղեգնաձորի համայնքապետարանի ներկայացուցիչները, դպրոցի տնօրենն ու ուսուցչական կազմը, բնակիչները, նախաձեռնողի ներկայացուցիչները և ՀՏԶՀ ներկայացուցիչները (ընդամենը՝ 30 մարդ): Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցանկը բերված են Հավելվածներ բաժնում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21-24 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Առավոտ» օրաթերթի 2024թ.-ի հունվարի 15-ի համարում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ է ... ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
(սեփականության (օգտագործման))
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)
ՆԿԱՏՄԱՄԲ
(անշարժ գույքի ծերքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)
ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
10.014 Տ ՍԱՏՅԱՆԻ 000001 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ.

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ...
(ստորագրությունը)
Կ. Տ.
«25» ... 2004 թ.

528780

Վկայականի համարը

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:2000
(մասշտաբը)



Գագաթներ միմյանց	Հեռավորություն մետրերով	Գագաթներ միմյանց միջև գտնվող տարածությունը
1-2	37.6	Հարևանության փողոց
2-3	19.8	Հանրային հասարակ
3-4	19.7	Հարևանության փողոց
4-5	19.3	Հարևանության փողոց
5-6	15.3	Հանրային շինություն
6-7	8.0	— " — " — " —
7-8	15.6	Հարևանության փողոց
8-9	19.9	Հարևանության փողոց
9-10	20.6	Հարևանության շինություն
10-11	13.0	Հարևանության շինություն
11-12	34.3	Հարևանության շինություն
12-13	19.8	Հանրային
13-14	19.4	" — " — " — "
14-15	6.8	" — " — " — "
15-16	49.9	Հարևանության փողոց
16-17	44.6	Հարևանության փողոց
17-1	6.0	Հանրային

Հատակագծի համարները	Հատակագծի անվանումները
1	Գարաժ
2	Ցանկապատ
3	Ցանկապատ
4	Դարպաս
5	Դարպաս

Ցանկապատի գրեթե
նկարագրությունը

Կատարող _____
(ստորագրություն)

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:500

(մասշտաբը)



Կատարող _____

(ստորագրությունը)

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:500
(մասշտաբը)

I հարկ



I հարկ
H=3.0
h=2.7
D=0.5-0.3
d=0.2-0.1

II հարկ
H=3.0
h=2.8
D=0.5-0.3
d=0.2-0.1

III հարկ
H=3.0
h=2.7
D=0.5-0.3
d=0.2-0.1

Կատարող _____
(ստորագրությունը)

ՀՈԳԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 10-014-023-009

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Գյուղատնտեսական

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Անասնապահության և արտադրության համար

ՀՈԳԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա)

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Օգտագործման իրավունք N2

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 10-014-023-009-001

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Հասարակական

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Անասնապահության գոգավոր

ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ) ~~2513.3~~ 2462,4

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Սեփականություն N3

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՀ	ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
1	10-014-023-009-002	Էլ. ենթակայան	18.0	սեփականություն
2	10-014-023-009-003	խոզակալարան	67.0	— " —
3	10-014-023-009-004	կալանոց	60.0	— " —
4	10-014-023-009-005	շաղախարան	16.0	— " —

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ N1 [illegible] 11.06.2013թ.

Կատարողներ

(ստորագրությունները)

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ



ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

	Մեղմացնող միջոցառումներ				
Ծրագրի գործողություններ	**Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ**	**Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ**	**Պատասխանատու մարմին**	**Մոնիտորինգի պատասխանատու մարմին**	**Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.2-1,5%**
	ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ				
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձեռքբերում	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն:	1.1. Փորձաքննության դրական եզրակացության ստացում	«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ	ՀՏՕՀ	
2. Հասարակական լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. ՍԱԲ ծրագրի, դպրոցի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ հանրային քննարկումն իրականացվել է 2025 թվականի փետրվարի 14-ին, ժամը 15:00-ին՝ Գետափի վարչական ղեկավարի աշխատակազմի շենքում: Հանրային քննարկման մասին հայտարարությունները 2024 թվականի դեկտեմբերի 23-ին տպագրվել են «Առավոտ» օրաթերթում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կայքում (atdf.am): Հանրային քննարկման ընթացքում ներկայացվել է նաև բողոքների հասցեագրման մեխանիզմը (ԲՀՄ), որի ներդրումը կիրականացվի ՀՏՕՀ-ի կողմից սահմանված մեխանիզմին համաձայն (ծրագրի ԲՀՄ ուղեցույց և	ՀՏՕՀ, «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ , Դպրոցի տնօրինություն, Երևանի քաղաքապետարան	ՀՏՕՀ	

		տես կետ 5):			
3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:	3.1. Աշխատանքային նախագիծն անհրաժեշտ է մշակել՝ հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀՏՁՀ	ՀՏՁՀ	
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ)					
	1.Առողջության և աշխատանքային անվտանգության պլան				
4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի և դպրոցի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակին կից և շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:	4.1. Աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգության, առողջության ապահովման համար նախատեսվում է՝ 4.1.1. Պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, պահպանել շինհրապարակում անվտանգության տեխնիկայի կանոնները, անցումները, ցանկապատել վտանգավոր տարածքները: 4.1.2. Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարության 2012 թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները: 4.1.3. Ապահովել աշխատանքային անվտանգության կանոնների պահպանումը բարձրության վրա աշխատանքներ իրականացնելիս: 4.1.4. Ապահովել 1-ին	Կապալառու	ՀՏՁՀ, ՏՎԽ	

		բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողներին՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով։ 4.1.5. Աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններ (հանգստի սենյակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն)։ 4.1.6. Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ։ 4.1.7. Վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը՝ բացառելով գործունեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները։ 4.1.8. Նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները, ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով։ 4.1.9. Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների			

		պահպանումն իրականացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի-ի N 21-Ն հրամանի հավելվածին համապատասխան։ 4.1.10. Աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական արտահագուստով։ 4.1.11. Մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողներին, այդ թվում նաև վարորդներին անցնել հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների։ 4.1.12. Անցկացնել բազմապրոֆիլ և մասնագիտացված բանվորական խմբերի ուսուցման և հրահանգավորման դասընթացներ։ 4.1.13. Տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ։			
	2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան				
5. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքների հասցեագրման մեխանիզմ (ԲՀՄ)	Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ։	5.1. Շինարարական աշխատանք-ներն սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակիր անձանց հետ և տեղեկացնել ԲՀՄ-ի մասին։ Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲՀՄ-ը՝ համաձայն որի. 5.1.1. Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում, անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ։ 5.1.2. Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային	Կապալառու	ՀՏՁՀ	

		ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ, այդ թվում ՀՏՁՀ-ի հեռախոսահամարներ և էլեկտրոնային հասցեներ: 5.1.3. Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան: Բողոքի գրանցման ձևը տես Հավելված 1-ում: 5.1.4. Անհրաժեշտ է ունենալ բնապահպանական և սոցիալական հարցերով մասնագետ, ով կլինի նաև բողոքներով զբաղվող պատասխանատու անձ, իսկ բողոքների հասցեագրումը իրականացնել համաձայն ծրագրի ԲՀՄ ուղեցույցի:			
3. **Շրջակա միջավայրի պահպանության պլան**					
6. Հողային աշխատանքներ: Շինանյութերի փոխադրումներ: Այլ շինարարական աշխատանքներ:	Դպրոցի հարակից տարածքում (մոտ 3-50մ հեռավորության վրա) առկա ազդակիրների՝ բնակելի տներ և շենքեր, փոքր բիզնեսի կետեր, տարածքին կից շինություններ, վրա գնահատվում են փոշու և վնասակար գազերի արտանետումներ. – գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների, – հողային աշխատանքների, նոր դպրոցի շենքի կառուցման և տարածքի բարեկարգման գործողություններում, – տրանսպորտային միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում:	***6.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում*** 6.1.1. Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի աղտոտվածությունը պետք է լինի թույլատրելի նորմերի սահմաններում: 6.1.2. Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակիր համայնքից բողոքների ստացման դեպքում: 6.1.3.Անհրաժեշտ է իրականացնել պարբերական ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: 6.1.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

		6.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը (≤30 կմ/ժ) փոշու քանակը նվազեցնելու նպատակով: 6.1.6. Շինհրապարակը ցանկապատ-ված է, շենքերը ծածկել համապատասխան ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով: 6.1.7. Մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում: 6.1.8. Գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով: 6.1.9. Բացառել տարածքում թափոնների բաց այրումը: 6.1.10. Օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում: 6.1.11. Ավազի շերտերի փռումը և հողի հետլիցքն իրականացնել նախապես թրջված վիճակում: ***6.2. Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.*** 6.2.1. Շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, 6.2.2. Հողային աշխատանքների արդյունքում հանված հողային			

		գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով։ 6.2.3. Շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար։ 6.2.4. Շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա։ 6.2.5. Նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը։ 6.2.6. Շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում։ 6.2.7. Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ։ 6.2.8. Մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով։ 6.2.9. Մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում 6.2.10. Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից			

		վերջիններիս դուրս գալը: ***6.3. Հոսքաջրերի կառավարում*** 6.3.1. Փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր: 6.3.2. Անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող ավազան: 6.3.3. Ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և ավազանում կուտակված ջուրը: 6.3.4. Ավազանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով: 6.3.5. Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով: 6.3.6. Ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր: **Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է** 6.3.7. Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: 6.3.8. Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, 6.3.9. Շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է կապալառու			

	Դպրոցի հին շենքի ապամոնտաժման և նախագծվող դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում է աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	կազմակերպության կողմից: 6.4. ***Աղմուկի և թրթռումների կառավարում*** 6.4.1 Գործունեության իրականացման ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: 6.4.2. Աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: 6.4.2. Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: 6.4.3. Հաշվի առնելով տարածքին կից բնակելի տների առկայությունը, աղմուկ առաջացնող աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել 10:00-18:00 ընկած ժամանակահատվածում: 6.4.4. Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, որոնց սարքին լինելը ստուգվելու է յուրաքանչյուր օր աշխատանքները սկսելուց առաջ: 6.4.5. Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: Իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել			

		շինհրապարակից: 6.4.6. Շինարարական աշխատանքներում ներգրավվելու են աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ: 6.4.6. Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և հետևել ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում: 6.4.7. Անհաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-ներով, այդ թվում՝ ականջակալներով: 6.4.8. Անհրաժեշտ է ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա: ***6.5.* Բուսականության պահպանություն և կառավարում** 6.5.1. Անհրաժեշտ է նախատեսել վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումներ, որպեսզի այդպիսի ծառերը լինեն հեշտությամբ ճանաչելի աշխատողների, տրանսպորտային միջոցների համար և պաշտպանված լինեն շին գործողությունների, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից: 6.5.2. Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության			

	Նախագծվող դպրոցի տարածքում առկա ծառաթփային բուսականության վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ ներկայիս կանաչապատ տարածքում կառուցապատման աշխատանքներ չեն իրականացվելու: Շինությունը կառուցվելու տարածում առկա ազատ տարածքում, իսկ առկա կանաչապատ և ծառապատ տարածքը ընդգրկվել է նախագծով նախատեսված բարեկարգման և կանաչապատման տարածքի մեջ: 	պաստառապատում, իսկ ըստ անհրաժեշտության նաև ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով: 6.5.3. Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության ոռոգման միջոցառումները դպրոցի շինարարության ընթացքում: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պոլիպրոպիլենե խողովակներով՝ կաթիլային եղանակով: 6.5.4. Անհրաժեշտ է խուսափել տարածքում այն ծառերի և թփերի հատումից, որոնք ազդեցության չեն ենթարկվում՝ համաձայն նախագծի: 6.5.5. Անհրաժեշտ է իրականացնել դպրոցի կանաչապատման աշխատանքները հաստատված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի» համաձայն: 6.5.6. Անհրաժեշտ է բացառել տարածքում առկա հատված բուսականության այրումը: 6.5.7. Նորատունկ բուսականության, ծառերի չկպչելու դեպքում կիրականացվի նոր ծառատեսակներով փոխարինում: **6.6. Բուսահողի պահպանում և կառավարում** 6.6.1. Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթակա հողաբուսաշերտի մերկացում և ժամանակավորապես պահեստավորում/պահպանում հրապարակում նախատեսված վայրում՝ հետագայում տարածքի			

	   Նախագծվող դպրոցի տարածքում առկա բուսահողի վրա ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ նոր շինության տեղակայման տարածքում ըստ իրականացված երկրաբանական ուսումնասիրության բուսահողի առկայություն չի արձանագրվել:	կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով: 6.6.2. Հողաբուսաշերտի պահեստավորումը պետք է իրականացնել 2 մ չգերազանցող բարձրությամբ կույտերի տեսքով և պաստառներով ծածկված վիճակում: 6.6.3. Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել հողային մակերեսների վրա անուղղակի ազդեցություններն, ինչպիսիք են շինթափոնների տեղադրում, կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացում և այլ գործողություններ: 6.6.4. Անհրաժեշտ է շին-հրապարակում կառուցել կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացման համար նախատեսված ժամանակավոր, պաշտպանիչ թաղանթով մեկուսացված ավազան (≥5 խ.մ): Հնարավոր կեղտաջրերը/բետոնաջրերը հեռացնել նախատեսված ավազանում, որտեղից հետերոգեն մասսայի նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ պինդ զանգվածը՝ պաշտպանիչ թաղանթի հետ միասին, հեռացնել աղբավայր: **6.7. Կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ** 6.7.1. Խուսափել ավելորդ ծառահատումներից և բուսածածկի ոչնչացումից: 6.7.2. Շինարարության ընթացքում պարբերաբար դիտարկել տարածքը՝ համոզվելու համար, որ նոր արժեքավոր տեսակներ չեն հայտնվել:			

	Տարածքում արժեքավոր և պահպանության հատուկ միջոցառումներ ենթադրող բուսատեսակները կամ կենդանատեսակները բացակայում են	6.7.3. Նոր տեսակների հայտնաբերման դեպքում նախաձեռնել համապատասխան միջոցառումներ՝ 6.7.3.1.Հայտնաբերման արձանագրում և փաստաթղթավորում 6.7.3.2. Կազմել արտակարգ արձանագրություն, որտեղ նշվում են հայտնաբերման վայրն ու պայմանները, հնարավոր վտանգները և ուղեկցվում է լուսանկարներով: 6.7.3.3. Հայտնաբերման պահին, եթե իրավիճակը կարող է վտանգել հայտնաբերված տեսակին կամ տարածքի կենսաբազմազանությանը, տվյալ հատվածում ժամանակավոր դադարեցնել բոլոր աշխատանքները, մինչև կանցկացվի գնահատում: 6.7.3.4.Ներգրավել մասնագիտացված էկոլոգ կամ կենսաբազմազանության փորձագետ: 6.7.3.5. Տեղեկատվության փոխանցում լիազորված մարմնին: 6.7.3.6. Աշխատանքների հարմարեցում կամ միջոցառումների փոփոխում			
	4. **Ենթակառուցվածքների և այլ ազդակիր օբյեկտների կառավարման պլան**				
7. Ենթակառուցվածքների և այլ ազդակիր օբյեկտների վրա ազդեցություն:	Դպրոցի տարածքում առկա են էլեկտրական ենթակայան, կաթսայատան խողովակաշար:	7.1. Էլեկտրակայանը և կաթսայատունը, ծրագրի նախագծի համաձայն, ենթակա են տեղափոխման դպրոցի տարածքի ներսում: Էլեկտրակայանի տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել՝ ապահովելով հոսանքի անխափան մատակարարումը դրանից սպասարկվող բնակչության համար: Գազի խողովակաշարն ենթակա չէ տեղափոխման, և դպրոցի հին շենքի	Կապալառու	ՀՏՀՀ ՏՎԽ	

		քանդման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է պաշտպանել խողովակաշարը հնարավոր վնասումից և ապահովել գազի անխափան մատակարարումը դրանից սպասարկվող բնակչության համար։ 7.2. Անհրաժեշտ է խուսափել շինարարական աշխատանքների ընթացքում տարածքում առկա և կից կառույցների, ենթակառուցվածքների (ոռոգման ջրագիծ, խմելու ջրի ջրագիծ) վրա հնարավոր ֆիզիկական ազդեցություններից։ Շինարարական աշխատանքների հետևանքով պատճառված վնասները կվերականգնվեն շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցներով։ 7.3. Անհրաժեշտ է խուսափել դպրոցի մերձակայքում առկա կառույցների մոտ մեքենաների/մեխանիզմների կայանումից և ապահովել վերջիններիս անխափան շահագործումը։ 7.4. Հողային աշխատանքների ընթացքում չնախատեսված ենթակառուցվածքների ի հայտ գալու դեպքում անհրաժետ է անմիջապես տեղեկացնել ՀՏՁՀ։			
	5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան				
8. Շին հրապարակի կազմակերպում։	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկող անձնակազմի վրա։	8.1. Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես նախագծվող դպրոցի տարածքի ներսում՝ բացառելով այլ ազդակիր տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության։ 8.2. Պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

		պահպանել շինհրապարակում անվտանգության տեխնիկայի կանոնները, անցումները, ցանկապատել վտանգավոր հատվածները: Անհրաժեշտ է շին-հրապարակը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի դպրոցին կից բնակելի տների անխափան մոտեցումը:	Կապալառու		
		8.3. Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:			
		8.4. Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր անանցանելի ցանկապատում ողջ շին-հրապարակի պարագծով:	Կապալառու		
		8.5. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:	Կապալառու		
		8.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում:	Կապալառու		
		8.7. Անհրաժեշտ է ձեռնարկել բաց հորերի տեսանելի կերպով ցանկապատում/նիշահարում և նախազգուշացնող նշանների պարտադիր տեղադրում:	Կապալառու		
		8.8. Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և			

		կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով: 8.9. Տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքերի՝ շինհրապարակի լուսավորության համար, շինհրապարակի լուսավորությունը պետք է ապահովի հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս: 8.10. Շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում:	Կապալառու		
	6. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան				
9. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	Դպրոցի մոտեցման ճանապարհների վիճակը գնահատվում է բավարար երթևեկության կազմակերպման համար: Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են. – երթևեկության խափանումներ – երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ – փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ – հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում – շինարարական ծանր սարքավորումների և	9.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: 9.2. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով: 9.3. Վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները: 9.4. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել դպրոցի մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝	Կապալառու	ՀՏՕՀ ՏՎԽ	

	փոխադրամիջոցների տեղաշարժման հետևանքով ճանապարհներին հնարավոր վնասներ։	ապահովելով ճանապարհի նախնական վիճակը։ 9.5. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետական մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն։ 9.6. Շինարարական հրապարակի մուտքերն ու ելքերն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ նվազագույնս խոչընդոտեն կից բնակելի տների և շինությունների անցուդարձին, ընդհանուր երթևեկությանը և հասարակական անվտանգությանը։ 9.7. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ։ 9.8. Վարորդները կվերապատրաստվեն ԵԿՊ-ի (Երթևեկության կառավարման պլան) և անվտանգության վերաբերյալ։ 9.9. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն աշխատանքային նախագծով սահմանված վայրերում։ 9.10. Ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով։ 9.11. Բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս։ 9.12. Բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ			

		օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5 կմ/ժ: 9.13. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս: 9.14. Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով: 9.15. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար: 9.16. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով: 9.17. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպճային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար: 9.18. Պարբերաբար պետք է ստուգել			

		հարակից ճանապարհների վիճակ պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում անհրաժեշտ է այն մաքրել:			
7. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան					
10. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	10.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում: 10.2. Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին: 10.3. Արտահոսքերի դեպքում անհրաժեշտ է հեռացնել աղտոտված հողային զանգվածը՝ հնարավոր աղտոտումը կանխելու համար: Աղտոտված հողային զանգվածը պահել և տեղափոխել թույլատրված աղբավայր հատուկ պաշտպանիչ տոպրակներով: 10.4. Կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն: 10.5. Շինհրապարակը կազմակերպվելու է հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին	Կապալառու	ՀՏՕՀ ՏՎԽ	

		համապատասխան, - շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, 10.6. Շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից, 10.7. Հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար, 10.8. Անհրաժեշտ է բաց պահել նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրել դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ, 10.9. Տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար, 10.10. Հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:			

		8. Թափոնների և նյութերի կառավարման պլան			
11. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:	11.1. Շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, 11.2. շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, 11.3. շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, 11.4. քանդման ընթացքում առաջացած շինարարական նյութերի տեսքով թափոնները՝ փայտ, քար, պատուհաններ, դռներ, ասբեստե թիթեղներ և այլն, կտեսակավորվեն և կտեղադրվեն առանձին-առանձին՝ շինհրապարակում, 11.5. առանձնացված թափոնները կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից կամ կհանձնվեն համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին, կամ պահանջարկի դեպքում կհանձնվեն բնակիչներին, 11.6. շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, 11.7. կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ	Կապալառու	ՀՏՋՀ ՏՎԽ	

		անհրաժեշտության, 11.8. Շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր, 11.9. բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում, 11.10. շինարարական նյութերի մնացորդները և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից։ 11.11. Շահագործման փուլում առաջանալու է միայն կենցաղային աղբ, որը տեղափոխվելու է մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։			
9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ					
12. Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ։	12.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն։ 12.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին։ 12.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ։	ՀՏՋՀ Կապալառու Կապալառու	ՀՏՋՀ ՏՎԽ	

		12.4. Մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների։ 12.5. Բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ			
10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան					
13. Շինհրապարակի վերականգնումը Դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչապատում	Շինարարական աշխատանքների ավարտից հետո բոլոր շինարարական թափոնները, նյութերը և սարքավորումները պետք է հեռացվեն դպրոցի տարածքից և տարածը վերականգնվի։	13.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն։ 13.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները։ 13.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը։ 13.4. Անհրաժեշտ է իրականացնել ՀՏՁՀ-ի կողմից մշակված ընդունման- հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները։ 13.5. Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները՝ համաձայն տարածքի կանաչ գոտիների բարեկարգման նախագծի։	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	
ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
14. Թերությունների վերացման աշխատանքներ. բուսականության վերականգնում	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները. բուսականության աճի վրա	14.1. Անհրաժեշտ է ներառել Ծրագրի համար նախատեսված բուսականությունը դպրոցի կանաչապատ տարածքների	Դպրոցի տնօրինություն/ Կապալառու	ՀՏՁՀ	

	ազդեցությունները:	սպասարկման պլանում: 14.2 Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ զանգվածի 90% կպչողականությունը և աճը: Հակառակ դեպքում անհհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները: 14.3 Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:	Դպրոցի տնօրինություն, ՀՏԶՀ, Դպրոցի տնօրինություն	ՀՏԶՀ ՀՏԶՀ	
15. Բնապահպանական աուդիտ	Բնապահպանական բոլոր ազդեցությունները	15.1.Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ	ՀՏԶՀ	ՀՏԶՀ	
16. Ենթակառուցվածքների գործառնության դիտարկում	Ենթակառուցվածքների վրա ազդեցությունները	16.1. Դպրոցի ջրամատակարարման համակարգերը միացված են համայնքային ջրատարին և գործառնում է: 16.2. Կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվում է դեպի համայնքային ջրահեռացման ցանց և գործառնում է:	ՀՏԶՀ	ՀՏԶՀ	
17. Առողջության, անվտանգության և արտակարգ իրավիճակների արձագանքմանն ուղղված միջոցառումներ	Առողջության, անվտանգության և արտակարգ իրավիճակի արձագանքմանն ուղղված միջոցառումների վրա ազդեցությունները	17.1. Կառույցն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով: 17.2. Վերգետնյա և ստորգետնյա անցումներն ապահովված են համապատասխան թեքահարթակներով, 17.3. Կառույցն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող սան հանգույցով, 17.4 Մուտքը կառույցի տարածք հասանելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար 17.5. Մուտքը տարածք կահավորված է տարածքի	ՀՏԶՀ	ՀՏԶՀ	

		վերաբերյալ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տեղեկատվության տարրերով։ 17.6.. Արտակարգ իրավիճակներում շինության ստորգետնյա հարկերը ծառայելու են նաև մարդկանց համար որպես ապաստարան՝ պաշտպանական նպատակներով, 17.7. Ստորգետնյա հատվածում՝ ապաստարանի համար նախատեսված է վթարային ելք, 17.8. Շենքն ապահովված է հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով՝ լիֆտերով, 17.9. Աստիճանավանդակը, դռները հակահրդեհային են՝ ինքնափակվող։			

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից	Բոլոր շինարարական տեղամասերը	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառուի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում
2. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ: Ազդակիր կողմերի տեղեկացվածությունը ծրագրի բողոքների հասցեագրման մեխանիզմի վերաբերյալ: Բողոքների/ դիմումների առկայություն:	Բոլոր շինարարական տեղամասերը	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր: Հանրային լսումների արձանագրություններ դիտարկումներ: Բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքների հասցեագրման մեխանիզմն իրականացվել է ԲԳՈՒՇ-ում նկարագրված բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան: Բողոքների/դիմումների հասցեագրում:	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: ԲՀՄ-ը՝ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Տարածքի մաքրում բուսականությունից	Տարածքը մաքրումը բուսականությունից իրականացվում է հաստատված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի» համաձայն: Շինհրապարակի	Բոլոր շինարարական տեղամասերը	Տարածքի բուսականությունից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում:	Հատված ծառերի/թփերի գրանցամատյանը առկա է:	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	մերձակայքի բուսականությունը պաշտպանված է:		Շին. հրապարակի ստուգայցեր:		
4. Շրջակա միջավայրի պահպանություն	Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում: Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում: Կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի տեղադրում: Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացման դեմ ուղղված միջոցառումներ:	Բոլոր շին տեղամասեր: Շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ: Շինարարական հրապարակի տարածքում օդի որակի մոնիտորինգի սարքավորումներ:	Ակնադիտական ստուգումներ շին. հրապարակի ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն, մասնավերապես բողոքների առկայության դեպքում: Օդի որակի մոնիտորինգի սարքավորումներով չափման ստուգում:	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու դրանց կարգավիճակը: Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում: Փոշենստեցում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ: Օդի որակի չափագրումներ առցանց հարթակի առկայությամբ:	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
